

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

«ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՏՕԳՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Սյս շաբթուան համարով լոյս կ'ընծայենք 30 նոյեմբեր 2007թ. ուշագրաւ յայտարարութիւն մը, գոր առաճ է մեզի Ամերիկայի Հայ Գրողներու Հիմնադիր ժողովը: Հայ գրողագրութիւնը, որ կը կրէ համանուն միութեան նախագահ Թորգոմ Փօսթանեանի ստորագրութիւնը, խստիւ կը պարսաւէ երեւանի ոստիկանութեան վարչութեան պետ՝ Ներսէս Նազարեանն ու կեղծոյցի ոստիկանապետ Մեհրապեանը, քաղաքական միտումներով երկու հայպատանիներ ծանրագոյն խոշտանգած եւ անոնց հանդէպ անմարդկային վերաբերմունք մը ցարկերած ըլլալու հրէական բնոյթի քստմեծի բռնարարներուն համար:

Վերլուծելով կարգով, համառօտակի դիտել տանք, թէ 12 նոյեմբեր 2007-ին, հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տիրումի» ուսանողական միութեան ատենապետ Բանաստեղծ Նարեկ Գալստեանը, եւ համանուն միութեան անդամներէն տասնընեք տարեկան Էտմոն Մակարեանը՝

Որովհետեւ անկախ Հայաստանի Ա. Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահական բողոքի կեցիկներ կը ցրուէին եւ կը փակցնէին պատերուն վրայ, նախագահական ընտրութիւններու կապակցութեամբ,

եւ որովհետեւ բողոքի կեցիկներ վրայ, նաեւ, տպուած էր նախագահական թեկնածու վարչապետ Սերժ Սարգսեանի լուսանկարը, վրան խաչ մը, վերտառութեամբ՝ «Սարգսեան Սերժին հայր կը մերժի»:

Նարեկ Գալստեան եւ Էտմոն Մակարեան կը ձերբակալուին եւ կ'առաջնորդուին ոստիկանատուն: Աւելի քան երեք ժամ արգելափակուած կը մնան ոստիկանատան մէջ: Կ'ենթարկուին ծեծի ու խոշտանգումներու: Պատուիրուելէ ետք, որ առաջին առնելու համար աւելի վատ հետեւաններու, մարդու չպատմեն պատահածը, ազատ կ'արձակուին: Դուրսը, փողոցին վրայ, քանի մը, իրենց վարկ ու փառքով, իշխանութիւններու ձեռքին գործիք դարձած վատահամբաւ անձնօրդիմակաւորներ, ինքնաշարժէն վար կ'առնեն Նարեկ Գալստեանը եւ անխնայ կը հարուածեն գլուխը: Բարեկամներ հէ՛ք պատանիներ, Նարեկը, կիսամեծ վիճակի մէջ, կը փոխադրեն հիւանդանոց:

Ամերիկայի Հայ Գրողներու Հիմնադիր ժողովը, յայտնելէ ետք

ՀԱԿԱՌԱԿ ԵՐԿՐԵՆ ՆԵՐՍ ՏԻՐՈՂ ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԼԻԲԱՆԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՕՆԱԿԱՏԱՐԵՑ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԸ

Երկրի նախագահի ընտրութիւններուն հետ կապուած, Լիբանանի մէջ այս օրերուն կը տիրէ բաւականին բարդ եւ անորոշ իրավիճակ: Հակառակ այս իրողութեան, Լիբանանահայութիւնը անմասն չմնաց Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 120-ամեակի տօնակատարութիւններէն: Կիրակի, Դեկտեմբեր 2-ին «Chateau Trianon» սրահին մէջ տեղի ունեցաւ յօբելենական հանդիսութիւնը, կազմակերպութեամբ Ս. Դ. Հ. Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի, հովանաւորութեամբ Ս. Դ. Հ. Կ. Կեդրոնական Վարչութեան:

2007 տարուայ ընթացքին կուսակցական, հրապարակային գաւազան ձեռնարկներու եզրափակիչ հանդիսութիւնն էր որ կը կատարուէր: Խուռներամ բազմութեան կողքին, հանդիսութեան ներկայ էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ Սրբազան Հայր՝ թեմիս Առաջնորդ Տէր Գեղամ Եպս. Խաչերեանը, Արհիպապառի Հայր Վարդան Եպս. Աշգարեանը, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Վահան Տէր Ղեւոնդեանը, Ամերիկայի հիւրաբար Պէչըրթ գտնուող Ս. Դ. Հ. Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանը, հայկական ազգային կուսակցու-



Հայրենասիրական երգերու հնչիւններուն տակ երիտասարդութիւնը Մայր Կուսակցութեան դրօշներով կը բարձրանայ բեմ

թիւններու ներկայացուցիչները: Լիբանանի, Հայաստանի եւ Հնչակեան Կուսակցութեան քայլերդներով սկսաւ հանդիսութիւնը: Բացման խօսքը կատարեց, Ազգ. Ռուբինեան-Սահակ Մեսրոպեան վարժարանի տնօրէնուհի ընկերուհի Մարի Շորճեան, որ ամփոփ գիծերու մէջ ներկայացուց օրուայ հանդիսութեան խորհուրդը: Ապա ան բեմ հրաւիրեց Ս. Դ. Հ. Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ

ընկ. Սարգիս Չափութեանը, որ փոխանցէ Վարիչ Մարմնի խօսքը: Ընկ. Չափութեան անդրադարձաւ 120-ամեայ Ս. Դ. Հ. Կ. վաստակին: Ան ըսաւ. «Դժուար է սահմանափակ վայրկեաններու մէջ ամփոփել Հնչակեան Կուսակցութեան 120 տարիներու գործունէութիւնը: Ուստի, դժուար է քանի մը վայրկեաններու մէջ ներկայացնել

Մար. ք էջ 6

ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ Է ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երեւանի մէջ լոյս տեսնող «Հայկական Ժամանակ» օրաթերթը Ռուսական «Կոմերսանտ» թերթէն քաղելով իր տեղեկութիւնները կը հաղորդէ որ, վերջերս Մատրիտի մէջ եւ ԱԶԿ Մինսկի խումբի համանախագահները Հայաստանի եւ Ատրպէյճանի Արտաքին Գործոց նախարարներուն յանձնած են փաստաթուղթ մը՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման մասին իրենց պատկերացումներու մասին:

Ըստ «Կոմերսանտի» ձեռք ձգած տեղեկութիւններուն, Երեւան պէտք է փուլ առ փուլ վերադարձնէ Լեռնային Ղարաբաղի շրջակայ հողերը, որոնք ներկայիս կը գտնուին հայկական զօրքերու վերահսկողութեան տակ: Հայկական ուժերը պէտք է հեռանան Քելբաջարի շրջանէն, հոն պահելով միայն սահմանափակ թիւով զօրք, իսկ Ատրպէյճանէն դէպի

ՁԵՒԱԴՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ «ԼԵԳԻՏԻՄ ՆԱԽԱԳԱՐ - 2008»

«Լեգիտիմ նախագահ - 2008» շարժման նախաձեռնող խումբը, որու անդամները կը սատարեն Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, որոշած են շարք մը քայլեր ձեռնարկել՝ ուղղուած 2008 թուականի Փետրուար 19-ին ոչ լեգիտիմ նախագահի ընտրութիւնը բացառելուն:

Շարժման ստեղծման մասին պաշտօնապէս յայտարարեցին Ս. Դ. Հ. Կ. ատենապետ Լիւտմիր Սարգսեան, «Հայրենիք Ու Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեան եւ ԱԱ նախկին փոխնախարար Գուրգէն Եղիազարեան:

«Լեգիտիմ նախագահ 2008»-ի նպատակն է անել այնպէս, որ հասարակութիւնն ակտիւանայ, որ երկրում ձեւաւորուի իրապէս ժողովրդավարական եւ օրինական, լեգիտիմ ճանապարհով ընտրուած իշխանութիւն, որպէսզի Հայաստանի զարգացումը, ֆորպոստացումը դադարեցուի եւ Հայաստանն իրապէս լինի անկախ երկիր», ըսաւ Ընկերուհի Սարգսեան:



Ս. Դ. Հ. Կ.-ի ատենապետ Լիւտմիր Սարգսեան

Հնչակեան Կուսակցութեան ղեկավարը տեղեկացուց, որ Տէր-Պետրոսեանին աջակցող բոլոր կուսակցութիւններն ու ուժերը, ինչպէս նաեւ Մտաւորականներու ֆորումը պիտի աջակցին նորաստեղծ շարժման:

Խումբի անդամներէն՝ «Հայրենիք Ու Պատիւ» կուսակցութեան ղեկավար Գառնիկ Մարգարեան յայտարարեց. - «Մենք ժողովրդին բերելու ենք հանրահաւաքի, գնա-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՄ ՄԵԿ «Ա1+»

«Ա1+»-ին ապօրինաբար լուս- նելուց յետոյ հաւանաբար մեր ատտորիտար իշխանութիւնների մտքով էլ էլ անցնում, որ տարի- ներ անց հանրապետութիւնով մէկ սիւսուող գորչ ու անողնաշար հե- ուստաւընկերութիւնների ֆոնին կը գտնուի մէկ հեռուստաւընկերու- թիւն, այն էլ՝ մարգային եւ տեղա- կան կլանների աչալուրջ հսկողու- թեան ներքոյ գտնուող, որը կարող է ցուցադրել գործող վարչակարգի կողմից անհաշտ թշնամի յայտա- րարուած ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը:

Ընթերցողներին յիշեցնենք, որ երբ Հոկտեմբերի 14-ին ԳԱԱ հեռուստաւընկերութիւնը եթեր հե- ուարձակեց ՀՀ առաջին նախագահի ելոյթն ամբողջութեամբ, նոյն օրը եւ Հոկտեմբերի 15-ին Գիւմրու եւ Ծիրակի մարզի ԱԱԾ պաշտօնեա- ները գրոյցներ ունեցան սեփակա- նատէր վահան իրաւունքների հետ այն մասին, թէ Լեւոն Տէր-Պետրոս- եանին եւ նրա համակիրներին եթեր տրամադրելը կը վնասի իրեն՝ վահան իրաւունքներին եւ հեռուս- տաւընկերութեանը, հարկաւոր է հեռու մնալ եւ չհեռարձակել այդօ- րինակ նիւթերը: Եւ երբ վահան իրաւունքները պնդել է, որ չի ենթարկուելու ոչ մի թելադրանքի, աւելին՝ հարցազրոյցի է հրաւիրել «Այլընտրանք» շարժման ղեկա- վար Նիկոլ Փաշինեանին, ղէպքերի գարգացումն ընթացել է այլ հու- նով: Հոկտեմբերի 17-ին վահան իրաւունքներին գրոյցի է հրաւիրել

կական կազմակերպութիւնն ու Գիւմրիի «Ասպարէզ» ակումբը՝ «Երեւան» հիւրանոցում հրաւի- րած քննարկման ժամանակ:

Իսկ ԳԱԱ հեռուստաւընկե- րութեան նկատմամբ սկսուած ար- շաւը թեւակոխել է նոր փուլ: Նոյեմբերի 23-ին Գիւմրու քաղա- քապետարանը հայցով դիմել է Տնտեսական դատարան՝ ԳԱԱ-ի հիմնադիր «ԶԱՊ» ՍՊԸ-ին՝ հե- ուստաւաշտարակի վրայ գտնուող հեռարձակող սարքաւորումները ազատել պարտադրելու պահան- ջով: Գործի քննութիւնը նշանակ- ուած է Դեկտեմբերի 17-ին, իսկ «ԶԱՊ» ՍՊԸ-ն հանդէս է գալու հակընդդէմ հայցով: Օրեր անց էլ ՀՀ ԿԱ ՀՊԾ աշխատակազմի Գիւմ- րու հարկային տեսչութիւնը դիմել է Տնտեսական դատարան՝ ընդդէմ «ԶԱՊ» ՍՊԸ-ի՝ ըստ ՀՊԾ ակտի գումարի բռնագանձման եւ գոյքի ու դրամական միջոցների վրայ արգելանք դնելու մասին հայցա- պահանջներով: Դատարանը մեր- ժել է արգելանքի պահանջը, գործն ընդունել է վարոյթ, իսկ գործի քննութիւնը նշանակել է դեկտեմ- բերի 10-ին, Գիւմրու նստավայ- րում:

Քննարկումը կազմակերպած Երեւանի մամուլի ակումբի նախա- գահ Բորիս Նաւասարդեանը, «Ին- տերնիւս» հ/կ նախագահ Նունէ Սարգսեանը եւ «Ասպարէզ» ակում- քի նախագահ Լեւոն Բարսեղեանը յայտարարեցին, որ ԳԱԱ-ի նկատ- մամբ կիրաւուած ճնշումներով

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԲԱՅԼԵՐԸ ԶԵՆ ԹՈՂՆՈՒՄ ԱԶԱՏ ՈՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԵԼՈՒ ՇԱՆՍ

Ասել, թէ Մերժ Սարգսեանը չունի ազատ եւ արդար ընտրու- թեամբ Հայաստանի նախագահ ընտրուելու շանս, կը լինի շատ սխալ: Նա այդ շանսը չունի 2008 թուականին, որովհետեւ այն, ինչ անում է այժմ Մերժ Սարգսեանը նախագահ դառնալու համար, գրե- թէ ոչնչով էի տարբերուում Ռոբերդ Քոչարեանի արածից, որի ականա- տեան էինք տասը տարի շարունակ: Իսկ Ռոբերդ Քոչարեանի արածն այդքան էլ հասարակական վստա- հութիւն չէր վայելում, ինչի պատ- ճառով էլ նա օրինակ 2003 թուակա- նին նախագահ ընտրուեց, մեղմ ասած, կասկածելի ընտրութեամբ: Հետեւաբար տրամաբանական է, որ նոյն բանը, կամ գրեթէ նոյն բանն անող Մերժ Սարգսեանը չի կարող ընտրուել առաւել ազատ ու արդար: Ոմանք գուցէ ասեն, թէ Մերժ Սարգ- սեանի արածն այդքան էլ նոյնը չէ եւ կարող են օրինակ բերել 2008 թուա- կանի պետական բեւձէն, որն իր աճի բացարձակ արտալայտութեամբ խիստ աննախադէպ է: Բայց Հայաս- տանի ներկայիս վիճակի թիւ մէկ ինդիքը ոչ թէ ինչ որ բանի քանակն է, այլ որակը: Իսկ որակական առու- մով, բեւձէն հաւաքելու, եւ ընդհան- րապէս պետութեան կառավարման մեխանիզմները նոյնն են թէ Ռո- բերդ Քոչարեանի, թէ Մերժ Սարգս- եանի մօտ: Եւ ինչպէս ցոյց է տալիս վարչապետի գործունէութիւնը, մե- խանիզմները չեն փոխուի նաեւ առաջիկայ երկու-երեք ամիսների ընթացքում:

Մերժ Սարգսեանը գրեթէ չունի 2008 թուականի Փետրուարին ազատ ու արդար ընտրութեամբ նախագահ դառնալու շանս: Եթէ անգամ ոեւէ այլ թեկնածու այդպի- սի շանս չունենայ, դա դեռ չի նշանակում, որ Մերժ Սարգսեանի շանսը մեծանում է ինքնաբերաբար: Ժողովրդին դեռ պէտք է համոզել, որ ուրիշի օգտին ձայն չտալուց բացի, պէտք է ձայնը տալ Մերժ Սարգսեանի օգտին: Իսկ դա համո- զելու համար էլ հենց պէտք են այլ մեխանիզմներ, այլ որակի արդիւնք ստանալու համար: Բայց մենք տես- նում ենք, թէ ինչ մեխանիզմներով են ցանկանում համոզել ժողովրդին: Ոմանց, այսինքն այն մարդկանց, ովքեր մշակում են վարչապետի նախընտրական մարտավարութիւնը, թուում է, թէ առաւօտից երեկոյ հեռուստատեսութեան բոլոր ալիք- ներով եւ բոլոր ժամերին, հանրա- պետութեան բոլոր տեղերում Մերժ Սարգսեանին ցոյց տալով, բնակչու- թեանն իրապէս կարելի է համոզել, որ հենց Սարգսեանն է նախագահի միակ ու անկրկնելի թեկնածուն: Նոյն կերպ վարում էին նաեւ Ռոբերդ Քոչարեանի պարագայում, բայց ընտրութիւնը ցոյց էր տալիս, որ դրանից հասարակութեան մօտ նրա ընկալումն աւելի հեռանում էր միակ ու անկրկնելի լինելուց: Իսկ Մայիսի 12-ի խորհրդարանի ընտ- րութիւնը որեւէ փաստարկ չէ, որ կարելի է բերել Մերժ Սարգսեանի օգտին: Դա կարելի է շահարկել բնակչութեան հետ յարաբերուելիս, բայց թէ բնակչութիւնը, եւ թէ Մերժ Սարգսեանն ու իր շրջապատը գի- տեն, թէ իրականում որքան ձայն է իրապէս տրուել ՀՀԿ-ին, որքան է պարտադրուած տրուել, որքանը կա- շառելով եւ որքանն ուղղակի նկար- ուել էլ տարբեր տեխնոլոգիաներով: Հետեւաբար ոչ ոք այդ պարա-

գայում խաբուած լինել չի կարող, որովհետեւ բոլորը գիտեն իրակա- նութիւնը: Այլ հարց է, թէ ով ինչ դիրքորոշում ունի այդ իրականու- թեան հանդէպ, եւ դա ում ինչքան է յուզում: Եթէ որեւէ մէկը չի ըմբոստացել կեղծիքի դէմ, դա դեռ չի նշանակում, որ կեղծիք չի եղել: Հակառակ մտածողութիւնը նման է բոլշեւիզմին, երբ ասում էին, թէ չկայ մարդը, չկայ խնդիրը: Զկայ բողոքողը, չկայ կեղծիքը: Այդպէս էին մտածում նաեւ նրանք, ովքեր այս կամ այն կերպ առնչութիւն ունէին հայերի ցեղասպանութեան հետ, բայց ահա մօտ հարիւր տարի անց ինչ որ ընկերութիւն սկսում է վճարել հարիւր տարի առաջուայ ապահովագրութեան գումարները: Այսինքն, ոչինչ չի մնում անհետ ու չի կորչում անպերազարձ: Դրա չիշարժան դրանորումներից մէկն էլ 1998 թուականի նախագահի ընտ- րութեան մասին ԱՄՆ Պետական դեպարտամենտի ղեկոյցն էր, որ հրապարակուեց ընտրութիւնից 6-7 տարի անց, նշելով, թէ Ռոբերդ Քոչարեանի օգտին կատարուել է աւելի քան հարիւր հազար լցոնում: Մինչդեռ 1998 թուականին այդ մասին ոչ ոք ոչինչ չէր խօսում: Եւ գուցէ ոչ ոք ոչինչ չխօսի նաեւ 2008 թուականին, բայց յայտնի է նաեւ, որ ինչքան պատիժն ուշանում է, այնքան աւելի խիստ է լինում: Յամենայն դէպս, Աստուծոյ պատիժը: Եկեղեցուն այդքան մօտ կանգնած, աւելի ճիշդ եկեղեցուն այդքան մօտ բերած քաղաքական ուժն ու նրա ղեկավարը չեն կարող չիմանալ այդ մասին, ինչպէս նաեւ այն մասին, որ մարդը ոչ միայն մարդու հետ գործ ունի, այլ առաջին հերթին Աստուծոյ: Ոչ միայն շատ փողը դրախտ էի տանում, այլ նաեւ շատ քուէն, եթէ այն, ինչպէս փողը, վաստակուած է ամէն գնով:

ՅԱԿՈՒ ԲԱԿԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ» Կայքէջ

Զկարողանալով համոզել Վահան Խաչատրեանին եւ հետ կանգնեցնել նրան ազատ եւ անկողմ- նակալ լրատուութիւն հաղորդելու մտքից, ԳԱԱ-ի վրայ սկսում են ճնշումներ բանեցնել հարկային պետական ծառայութեան աշխատակիցները

Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի նախա- գահ Գրիգոր Ամալեանը եւ նոյն բանը յորդորել, ինչ որ մինչ այդ յորդորել էին ԱԱԾ Ծիրակի մարզի եւ Գիւմրու հարկային տեսչու- թեան պետն ու այլ պաշտօնեաներ: Հետաքրքիր է, որ, ոչ պատահական գուզադիպութեամբ նոյն օրերին երեւանեան հեռուստաւընկերութիւն- ները դադարեցին լուսաբանել երե- ւանեան մամուլի բանավիճակին ակումբներում տեղի ունեցող մա- մուլի ասուլիսներն ու քննարկում- ները: Զկարողանալով համոզել վա- հան իրաւունքներին եւ հետ կանգ- նեցնել նրան ազատ եւ անկողմնա- կալ լրատուութիւն հաղորդելու մտքից, ԳԱԱ-ի վրայ սկսում են ճնշումներ բանեցնել հարկային պե- տական ծառայութեան աշխատա- կիցները: Նրանք այցելում են ԳԱ- Ա ՀՀ գովազդատուներին, պա- հանջում գովազդային փաստաթղ- թեր եւ յորդորում այլեւս գովազդ չտեղաւորել ԳԱԱ-ի եթերում: Տե- ւական ժամանակ շարունակում են հարկային տեսուչների եւ ԱԱԾ աշխատակիցների անօրինական ճնշումները եւ գովազդատուներին ուղղուած յորդորները, որպէսզի նրանք գովազդ չտրամադրեն ԳԱ- Ա-ին:

ԳԱԱ հեռուստաւընկերութեան շուրջ ստեղծուած մթնոլորտի եւ նրա գլխին դամոկլեան սրի պէս կախուած փակման վտանգի մասին ահազանգեցին Երեւանի մամուլի ակումբը, «Ինտերնիւս» հասարա-

ստեղծուած է վտանգաւոր նախա- դէպ, եւ, որ պէտք է ցուցաբերել հետեւողականութիւն՝ թոյլ չտա- լով լուսնելու մայրաքաղաքային հեռուստաւընկերութիւնների կող- մից ստեղծուած լրատուական շրջա- փակման պայմաններում անաչառ լրատուութիւն հաղորդող եւ մէկ հեռուստաւընկերութեան փակում:

Այդ մտահոգութեամբ էլ Նո- յեմբերի 29-ին Լեւոն Բարսեղեանը կոչով դիմել է Գիւմրու քաղաքա- պետ վարդան Ղուկասեանին՝ յոր- դորելով թողնել ինդիքի կարգա- տրման դատական ճանապարհի տարբերակ: Հետաքրքիր է, որ վարդան Ղուկասեանը հանդիպման է հրաւիրել Լեւոն Բարսեղեանին եւ հաղորդել, որ քաղաքապետարանը պատրաստ է բանակցել վահան իրաւունքների հետ, պայմանով, որ վերջինս քաղաքապետարանին վճա- րի անցած տարիների հեռուստա- աշտարակը շահագործելու դիմաց, ապա՝ պայմանագիր կնքել ապա- գայ շահագործման համար: Լեւոն Բարսեղեանն էլ աւարկել է՝ նշե- լով, որ դատարան ներկայացուած չի հայցը նման համաձայնութեան տեղ չի թողնում, որովհետեւ հայցով պահանջում է ուղղակի ազատել աշտարակը հեռուստաւընկերութեան սարքաւորումներից եւ ոչ թէ՛ պար- տադրել հեռուստաւընկերութեանը նախորդ տարիների օգտագործման դիմաց վարձ վճարել քաղաքապե- տարանին:

«ՏԱՐԵԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՇՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄՍՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջամի
ԽՍԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՏԵԱՆ
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱԻԹԵԱՆ
Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԵՊՅ ԽՈՒՄԲ ՍԸ ԴԱՍԱԽՕՍՆԵՐՈՒ ԿՐԴՈՎՄՈՒՆՔԸ «Յ1-Ը ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԻՐ ԳՈՐԾԱՌՈՅԹԸ»

Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) մի խումբ դասախօսներ իրենց մտահոգութիւն են յայտնել յայտարարութեամբ, որն ներկայացնում են քամբողջութեամբ:

Հայաստանում գործող բոլոր, այդ թւում եւ հակադիր քաղաքական ուժերը համամիտ են այն հարցում, որ 2008 թուականի փետրուարի 19-ին կայանալիք նախագահական ընտրութիւնների որակը վճռական նշանակութիւն է ունենալու երկրի ապագայի համար:

Ընտրութիւնների ազատութեան եւ արդարութեան կարեւոր չափորոշիչներին մէկը տեղեկատուութեան մատչելիութիւնն է: Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիների ճնշող մեծամասնութեան համար տեղեկատուութեան սպազիր միջոցները տարբեր պատճառներով մատչելի չեն եւ ներքաղաքական զարգացումների մասին տեղեկատուութեան հիմնական աղբիւրը նրանց համար հեռուստատեսային էթերն է:

ՁԼՄ-ները, հեռուստատեսութիւնները ընդհանրապէս, եւ Հանրային հեռուստաընկերութիւնը յատկապէս պարտաւոր են հանրութեանը տրամադրել ամբողջական, համակողմանի, հաւասարակշռուած եւ անաչառ տեղեկատուութիւն: Մեր խորին համոզմամբ Հայաստանեան հեռուստաընկերութիւնների ջարջախիչ մեծամասնութիւնը, Հանրային հեռուստատեսութեան առաջնորդութեամբ, չեն կատարում այս գործառնությունը:

Մենք՝ ներքոստորագրեալներս, մեր մտահոգութիւնն ու վրդովմունքն ենք արտայայտում այս իրավիճակի կապակցութեամբ: Վերը նշուած հեռուստաընկեր-

րութիւններին, եւ մասնաւորապէս Հանրային հեռուստատեսութեանը կոչ ենք անում չմոռանալ հանրութեան առաջ ունեցած պարտաւորութիւնների մասին եւ վերջ դնել հասարակութեան լայն շերտերին տեղեկատուական շրջափակման մէջ առնելու քաղաքականութեանը:

Դուժմանեան Վահրամ - ԵՊՀ Ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, ֆիզ.-մաթ. գիտութիւնների թեկնածու, դոցենտ, Սեդրակեան Դաւիթ - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Յակոբեան Յակոբ - ԵՊՀ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, Սահակեան Արթուր - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակիր-անդամ, Յակոբեան Եուրի - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակիր-անդամ, Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, փրիլոսոփայական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Ղազարեան Հայկ - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Չուբարեան Էդուարդ - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Խաչատրեան Իշխան - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Յակոբեան Գուրգէն - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների թեկնածու, դոցենտ, Մարտիրոսեան Վալերի - ԵՊՀ ամբիոնի վարիչ, ֆիզ.-մաթ. գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակիր-անդամ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ ԱՌԱՋԱԴՐՈՒԵՑ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՕԵԿ-ն Դեկտեմբեր 3-ի արտահերթ համագումարում նախագահի թեկնածու առաջադրեց կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանին: Որպէս նախագահի թեկնածու նրան ներկայացրեց կուսակցութեան փոխնախագահ Հերմինէ Բիշարեանը: Իսկ մինչ այդ տիկին Բիշարեանը անդրադարձաւ քաղաքական դաշտում տիրող իրավիճակին եւ գործող իշխանութիւնների վերարտադրման վտանգներին:



ՕԵԿ համագումարը կը բաւարարէ Արդիւր Բաղդասարեանը նախագահի թեկնածու մտեցմանը»:

Ամփոփելով երկրում տիրող սոցիալական վիճակը՝ տիկին Բիշարեանը ժողովրդին զգուշացրեց այլեւս թոյլ չտալ, որպէսզի իրենց ծանր վիճակից օգուտ են եւ զենք իրենց ձայները: «Ժողովրդից գողացած փողերով փորձում են ժողովրդին առնել: Այդ որտեղից նրանց այդ գումարները: Արդար քրտինքով են վաստակել», - ներկաներին դիմեց տիկին Բիշարեանը:

Նրա ելույթները ողջունուեցին բոլոր ծափահարութիւններով եւ «Արթուր նախագահ, Արթուր նախագահ, Արթուր նախագահ...»: Յաղթանակ, յաղթանակ...» բացականչուեցին թիւներով: Ընդգծելով, որ իր համար պատիւ է Արթուր Բաղդասարեանի կողքին լինելը՝ նա վստահեցրեց, որ երկիրն այս իրավիճակից կարող է դուրս բերել միայն Արթուր Բաղդասարեանը: Իսկ ինչու է ՕԵԿ-ն որոշել հանդէս գալ սեփական թեկնածուով եւ չաջակցել արդէն առաջադրուած թեկնածուներից որեւէ մէկին. բացատրեց անձամբ Արթուր Բաղդասարեանը: Տէր-Պետրոսեանին չմիաւորուելու կապակցութեամբ ՕԵԿ նախագահն ասաց. «Ոչ միայն նրա համար, որ մենք երկիրը աւագակապետութիւն չենք համարում, այլեւ նաեւ գնահատելով նոյն Տէր-Պետրոսեանի կատարած ներդրումը մեր պետականութեան կայացման գործում, դէմ ենք պետաիշխանական համակարգը հիմնովին կազմաքանդելու

մտեցմանը»:
Դէմ լինելով աւագակապետութիւն արտայայտութեանը՝ Արթուր Բաղդասարեանը միաժամանակ նշեց. «Մենք ձեռք ենք բերել Հայաստանի ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը, լաւ թէ վատ կառուցել ենք մի երկիր, որի դրոշն այսօր ծածանուած է աշխարհի բազմաթիւ մայրաքաղաքներում»:
ՕԵԿ նախագահ աւելի յստակ ներկայացրեց, թէ ինչու չի աջակցում իշխանութեան ներկայացուցչին եւ ինչու է դէմ իշխանութեան վերարտադրմանը. «Իշխանութիւնն ամէն գնով վերարտադրելու ձգտում ունեցող միւս բեւեռը Հայաստանը յանգեցրել է այն վիճակին, որ երկիրը դարձել է անմրցունակ»:
Բոլոր առաջադրուած եւ առաջադրուելու մտադրութիւն ունեցող նախագահի թեկնածուներին նա կոչ արեց քաղաքական պայքարի հիմքում դնել հանդուրժողականութիւնը եւ թշնամիներ չլինուել միմեանց մէջ:

Արթուր Բաղդասարեանը նման առաջարկով պատրաստուած է դիմել նախագահի բոլոր թեկնածուներին՝ նրանց առաջադրելով սկսել հրապարակային քննարկումներ եւ բանավեճեր: Նա գտնում է, որ միայն հրապարակային քննարկումների արդիւնքում է հնարաւոր ժողովրդին տալ ճիշդ ընտրութեան հնարաւորութիւն: «Դա պէտք է լինի բոլոր թեկնածուների միասնական կամքի արտայայտումը՝ Հայաստանում կազմակերպել իսկապէս արդար ու ազատ ընտրութիւն», - ասաց ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարեանը:

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ՈՐՈՇ ԴԵԿՎԱՐՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՒՅ»:
«Ազգային միաբանութիւն» կուսակցութեան Երեւանի էրեբունի համայնքի կառուցներից մէկի արդէն նախկին ղեկավար Գուրգէն Գրիգորեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրույցում հաստատեց մամուլում հրապարակուած տեղեկութիւնները, որ ինքը, ինչպէս նաեւ Գաւառում եւ Հրազդանում կուսակցութեան տեղական կառուցների երկու ղեկավարներ դուրս են «Ազգային միաբանութիւն»-ից եւ որոշել են միանալ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախաձեռնած համաժողովրդական շարժմանը:

ասում են՝ մենք գործ չունենք այդ դաւաճան մարդկանց հետ», - շարունակեց նա՝ պնդելով, որ Գեղամեանը «բոլոր ժամանակներն էլ պաշտպանել է իշխանութիւններին»:

Որպէս ապացուց նա չի շեղեց, որ 2003 թուականի նախագահական ընտրութիւններում Գեղամեանը հրաժարուել էր պաշտպանել Ստեփան Դեմիրճեանին՝ իրենց զգուշացնելով, որ չմասնակցեն ընդդիմութեան հանրահաւաքներին:

Նա պնդեց նաեւ, թէ հենց իշխանութիւնների հետ պայմանաւորուածութիւնների արդիւնքում էր, որ «Ազգային միաբանութիւն»-ը պարտուեց Ազգային ժողովի վերջին ընտրութիւններում:

Գուրգէն Գրիգորեանը ասաց, թէ իստում է էրեբունու տարածքի իր կառուցի բոլոր 3500 անդամների անունից, որոնք բոլորն էլ (եւ ոչ միայն նրանք) պատրաստ են միանալ «այս (Լեւոն Տէր-Պետրոսեանի) համաժողովրդական շարժմանը»:

Արտաշէս Գեղամեանը, «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ իրենք ունեն 411 տարածքային կազմակերպութիւն, եւ բացի Գուրգէն Գրիգորեանից, իրենց ոչ ոք կուսակցութիւնից դուրս գալու մասին տեղեկ չի պահել: Իսկ էրեբունի համայնքում «Ազգային միաբանութիւն»-ը, ըստ Գեղամեանի, ունի 7 տարածքային կազմակերպութիւն, որոնցից միայն մէկի ղեկավարն էր Գրիգորեանը:

«Ազգային միաբանութեան» առաջնորդ Արտաշէս Գեղամեանը, Գուրգէն Գրիգորեանի խօսքերով, «իրականում աշխատում է իշխանութիւնների համար եւ պառակտում է ընդդիմութիւնը»:

«Գեղամեանի բոլոր գործողութիւնները տանում են նրան, որ նա իշխանութիւնների հետ սերտաճած ընդդիմադիր է», - ասաց Գրիգորեանը: - «Նա ամէն ինչ անում է, որպէսզի ընդդիմութիւնը քայքայի, փոշիացնի. դա 2003 թուականից սկսած: Ես էլ չեմ ուզում մասնակցել»:

«Նման մարդու հետ ճանապարհ գնալը շատ վտանգաւոր է ոչ միայն ինձ համար, այլեւ բոլորի համար... Իմ թիմակիցները, որոնք պայքարել են ինձ հետ, եղել են իր ամբողջ ընտրաընտանիքի, այսօր ինձ

ԱՐԴԵՆ ՆԱԽԱԳԱՅԻ 16 ՅԱԲԱԿՆՈՐԴ
ԸՂՃ նախագահի նախկին խորհրդական Արման Մելիքեանն այսօր դիմել է ոստիկանութեան վիզաների եւ անձնագրերի վարչութիւն 10 տարուայ ՀՀ քաղաքացիութեան մասին վկայող փաստաթղթեր ստանալու համար:
Յիշեցնենք, որ մինչ այդ արդէն դիմել էին 15 մարդ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը, Արտաշէս Գեղամեանը, Իսրայէլ Յակոբկոսեանը, Արամ Կարապետեանը, Արթուր Բաղդասարեանը, «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանը, «Ազգային Համաձայնութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Յարութիւնեանը, ՀՀԿ առաջնորդ, վարչապետ Սերժ Սարգսեանը, «Ժողովրդական կուսակցութեան» առաջնորդ Տիգրան Կարապետեանը, ՀՅԴ բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանը, ԱԺՄ Վազգէն Մանուկեանը եւ քաղաքացիներ Վարդան Պառախէանը, Հրաչէայ Սարգսեանը, Միսանիկ Խաչատրեանը եւ Մհեր Մկրտչեանը:
Դիմողներից մերժում են ստացել «Նոր ժամանակներ» կուսակցութեան առաջնորդ Արամ Կարապետեանը եւ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը:
ԱԺՄ Վազգէն Մանուկեանն ու քաղաքացի Վարդան Պառախէանը ոստիկանութիւնից ստացել են անհրաժեշտ փաստաթղթերը:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ՆՈՐ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ ՉԿԱՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) նախարարների խորհրդի ամենամեայ ժողովի շրջանակներում տեղի է ունեցել Հայաստանի եւ Ատրպեյջանի արտգործնախարարներ Վարդան Օսկանեանի եւ էլմար Մամեդբարովի հանդիպումը՝ Մինսկի խմբի համախաղաղության եւ համախաղաղության երկրների արտգործնախարարների (ԱՄՆ-ն ներկայացուած էր փոխարտգործնախարարի մակարդակով) մասնակցութեամբ:

«Մենք բաւականութեամբ նշում ենք, որ Հայաստանը եւ Ատրպեյջանը համաձայնել են գալիք տարում շարունակել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները», - ասուած է նախարարների խորհրդի ընդունած յայտարարութիւնում:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը ասաց, որ ներկայացուած փաստաթղթում «նոր սկզբունքներ չկան»:

«Նոյն փաստաթուղթն է, ինչ երկու տարի է մօտաւորապէս արդէն սեղանի վրայ է: Պարզապէս փաստաթղթում այն հարցերի շուրջ, որ դեռեւս չկայ համաձայնութիւն, համախաղաղողները ներկայացրել են իրենց տարբերակը կողմերին՝ նրանց քննարկման համար: Սա է միակ նորութիւնը այդ փաստաթղթում: Դրա համար էլ պէտք է զգոյշ լինել գնահատականների մէջ, որովհետեւ մակարդակը բարձր էր, եւ կարող է ակնկալութիւնները մեծ լինեն», - ասաց Վարդան

Օսկանեանը:

Հարցին, թէ ճիշտ է արդեօք, որ համախաղաղողները ցանկանում են, որ մինչեւ Հայաստանի նախագահական ընտրութիւնները ստորագրուի համաձայնագիր առանցքային սկզբունքների շուրջ, Օսկանեանը արձագանքեց. - «Ստորագրման մասին ընդհանրապէս խօսք չկայ: Միգուցէ նրանց ցանկութիւնը դա է... Իհարկէ, համախաղաղողները միշտ էլ, երբ նոր բան են ասում, կամ հարց են բարձրացնում, դա նախագահների մակարդակով է լինում... Ճնշում, որպէս այդպիսին, չկայ»:

«Կան ցանկութիւններ: Ի հարկէ, բոլորը կ'ուզենան տեսնել, որ այն աշխատանքը, որ երկու տարի է տարւում է, յանկարծ չկորի», - շարունակեց նախարարը: - «Որովհետեւ կան նախագահական ընտրութիւններ, կը լինեն նոր նախագահներ, եւ ուզում են, որ ինչ-որ բան մնայ մշտական, որպէսզի հիմք ծառայի հետագայ բանակցութիւնների համար: Սա է, ես կարծում եմ, համախաղաղողների նպատակը, եւ սա պէտք է ընկալել որպէս ճշում»:

Օսկանեանը նաեւ հերքեց իր ատրպեյջանցի գործընկեր Մամեդբարովի՝ ռուսաստանեան ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին տուած հարցազրոյցում ասածը, թէ քննարկուող փաստաթղթում լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին խօսք չկայ:

«Իհարկէ, կայ», - ասաց Վարդան Օսկանեանը: - «Բոլոր հարցերն էլ կան: Դա սկզբունքների առումով ամբողջական է: Հարցի կարգաւորման բոլոր սկզբունքներին, տարրերին անդրադառնում է [փաստաթուղթը], այլապէս չէր կարող փաստաթուղթը ամբողջական լինել»:

ԵԱՀԿ-Ի ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
ԵԱՀԿ-ի արտգործնախարարների խորհուրդը Մադրիդում անցկացուած տարեկան նիստում յայտարարութիւն է ընդունել Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ:

«Մենք բաւականութեամբ նշում ենք, որ Հայաստանը եւ Ատրպեյջանը համաձայնել են գալիք տարում շարունակել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները», - ասուած է փաստաթղթում:

Նախարարների խորհուրդը, աստարելով հակամարտութեան խաղաղ կարգաւորման հիմնարար սկզբունքների մշակման ուղղութեամբ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ջանքերը, «վճռականորէն կոչ է անում երկու կողմերին՝ յաղթահարել մնացող վերջին տարաձայնութիւնները, դրանով իսկ հաւանութիւն տալ կարգաւորման ընդհանր

նուր հայեցակարգին եւ դրա հիման վրայ անցնել համընդգրկուն խաղաղ համաձայնութեան մշակմանը»:

Արտգործնախարարների հանդիպման ժամանակ այսօր ԵԱՀԿ-ի նախագահութիւնը իսպանիայից փոխանցուել է Ֆինլանդիային:

Կազմակերպութեան նոր նախագահող Ֆինլանդիայի արտգործնախարար Իլկկա Կանեւան յայտարարել է, որ կ'աջակցի դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ Մինսկի խմբի համախաղաղողների բոլոր քայլերին:

«ԵԱՀԿ-ը պէտք է բոլոր ջանքերը գործադրի Ատրպեյջանում, Վրաստանում եւ Մոլդովայում առկայ հակամարտութիւնների կարգաւորման հարցում տեղաշարժի հասնելու համար», - ասել է Կանեւան:

«ԼԵԳԻՏԻՄ ՆԱԽԱԳԱՅ - 2008»

Շարունակուած էջ 1-էն

լու ենք ժողովի, պահանջելու ենք եւ ստիպելու ենք, որ նա տայ հրաժարական, որպէսզի երկրում, ըստ Սահմանադրութեան, ստեղծուեն հաւասար պայմաններ՝ ընտրելու, ընտրուելու, դառնալու նախագահ»:
Ան կոչ ըրաւ նախագահի բոլոր այն թեկնածուներուն, որոնք տարբեր պայտօններ կը գրաւեն, հրաժարական տալ, քանի որ այդ է ազատ եւ արդար ընտրութիւններ ունենալու կարե-

ւոր նախապայմանը:
«Մօտ օրերի ընթացքում մի հսկայ ուժ է ձեւաւորուելու, եւ այդ ուժը իր վրայ է վերցնելու ամբողջ պատասխանատուութիւնը», - ասելուց Գառնիկ Մարգարեան:

Նախաձեռնողներու կարծիքով, ճիշդ պիտի ըլլար, որպէսզի «Լեգիտիմ նախագահ - 2008» շարժման միանային նաեւ այն քաղաքական ուժերը, որոնք թէեւ չեն պաշտպանել Տէր-Պետրոսեանին, բայց կը ցանկանան ազատ եւ արդար ընտրութիւններ:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՆ ԻՐԵՆՑ ՆՊԱՏԱԿԻՆ «ՌՈՒՆԱԼ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՒ 6 ՏԱՐՈՒԱՅ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Նոյեմբեր 29-ին Հայաստանի վերաքանիչ դատարանը բեկանեց առաջին ատեանի դատարանի դատավճիռը, որով արդարացուել էին «Ռոնալ Արմենիա»-ի համասեփականատէր Գագիկ Յակոբեանը եւ ընկերութեան փոխտնօրէն Արամ Ղազարեանը՝ առաջինին դատապարտելով 6, իսկ երկրորդին՝ 2 տարուայ ազատազրկման:



Գագիկ Յակոբեան եւ Արամ Ղազարեան

Նախագահող դատաւոր Սուրէն Ղազարեանը նշեց, որ վերաքննիչ դատարանը հանգել է հետեւութեան, որ առաջին ատեանի դատարանի փաստարկներն անհիմն են, իսկ ամբաստանեալին մեղսագրուած արարքները՝ լիովին ապացուցուած:

Գագիկ Յակոբեանը մեղաւոր ճանաչուեց առանձնապէս խոշոր չափերի խարդախութեան, մաքսանենգութեան, հարկերից խուսափելու եւ փաստաթղթեր կեղծելու համար, իսկ Արամ Ղազարեանը՝ հարկերից խուսափելու, մաքսանենգութեան եւ փաստաթղթեր կեղծելու համար: Քանի որ ինչպէս Յակոբեանը, այնպէս էլ Ղազարեանը արդէն 1 տարի 9 ամիս անցկացրել էին Ազգային Անվտանգութեան մեկուսարանում, այդ ժամկէտը հանուեց նրանց պատժաւափից: Իսկ Ղազարեանի նկատմամբ կիրառուեց նաեւ համաներում, եւ դատաւոր Սուրէն Ղազարեանը վճռեց նրան ազատել հիմնական պատիժը կրելուց:

Վճուաբեկ դատարանը վճռեց Գագիկ Յակոբեանից եւ Արամ Ղազարեանից բռնագանձել 455 միլիոն 717 հազար 900 դրամ՝ որպէս պետութեանը պատճառուած նիւթական վնաս:

Դատաւոր Սուրէն Ղազարեանը մասնակիորէն բաւարարեց նաեւ «ՖԻԳ» ընկերութեան հայցը. յօգուտ «ՖԻԳ»-ի Գագիկ Յակոբեանից կը բռնագանձուի 555 հազար 825 ամերիկեան դոլարին համարժէք դրամ՝ որպէս տուժողին պատճառուած վնաս:

Դատարանում հաւաքուածները զայրոյթով ընդունեցին դատավճռի հրապարակումը:

Գագիկ Յակոբեանը դեռ մինչեւ դատավճռի հրապարակումը «Ազատութիւն» ռադիոկայանին ասել էր, որ, իր կարծիքով, դատա-

ւոր Ղազարեանը կը բաւարարի մեղադրող կողմի պահանջը: Մեղադրող կողմը, ի դէպ, հենց նոյն պատժաւափերն էր պահանջել:

«Ռոնալ Արմենիա»-ի փոխտնօրէն Արամ Ղազարեանը, ով ազատ արձակուեց, դատավճռի հրապարակումից յետոյ ասաց, որ իրենք անպայման բողոքարկելու են վճիռը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Ղազարեանը հաստատեց իրենց շահերի պաշտպան Աշոտ Սարգսեանի պնդումը, թէ այս քրէական հետապնդման նպատակը «Ռոնալ Արմենիա»-ի սեփականատէրերից բիզնեսը խլելն է:

«Միանշանակ. նպատակը միայն գործը խլելն է, գործարանը խլելն է», - ասաց Արամ Ղազարեանը՝ հրաժարուելով ասել, թէ կոնկրետ ով է ուզում դա անել. - «Չեմ կարող ես ասել. շուտով կը տեսնէք ովքեր են»:

Գագիկ Յակոբեանի եւ Արամ Ղազարեանի շահերի պաշտպան Աշոտ Սարգսեանը դատական նիստին ներկայ չէր: Աւելի ուշ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Սարգսեանը բացատրեց, թէ դատարան կը գար՝ եթէ տեսնէր, որ դա իրօք դատարան է, իսկ որոշում կայացնողները՝ իսկապէս դատաւորներ. - «Այդ հագուստը, որ իրենց վրայ գցել են այդ երեք անձը եւ եկել են այդ դահլիճ, դեռ չի նշանակում, որ իրենք դատաւորներ էին եւ եկել էին դատարան»:

«Դիմելու ենք ընդհանրապէս այս խայտառակ դատավճիռը բեկանելու», - ասաց փաստաբանը: - «Վերջնականապէս հիասթափուած եմ: Հայաստանում գոյութիւն չունի արդարադատութիւն»:

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

Նախիջեւան տանող ճանապարհը պէտք է բացուի: Քելբաշարի շրջանին մէջ պէտք է հաստատուի միջազգային կառավարում, որ կը գործէ ԵԱՀԿ-ի հովանիին տակ, սակայն ժամանակի ընթացքին շրջանը կը յանձնուի Ատրպեյջանի ամբողջական վերահսկողութեան:

Նախագիծը կը խօսի նաեւ Լաչինի շրջանին Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցքի մը ստեղծման մասին:

Հայկական կողմի ազատած տարածքները պէտք է ապառազմականացուին, եւ այնտեղ պէտք է տեղակայուին միջազգային խաղաղապահներ:

Վերջապէս, միջազգային հանրութիւնը պէտք է խրախուսէ այդ շրջաններէն հայ վերաբնակիչներու վերադարձը Հայաստանի ներ-

քին շրջաններ, իսկ մի քանի տարի ետք Քելբաշարի շրջան կրնան վերադառնալ ատրպեյջանցի փախստականները: «Խաղաղ համաձայնագրի երաշխաւորը կը դառնայ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը», - ըստ «Կոմերսանտի»:

«Հայկական ժամանակ» թերթը իր կողմէ կ'աւելցնէ. «Եթէ հիմք ընդունենք այս տեղեկատուութիւնը, Քոչարեանին փոխանցուած փաստաթղթում ոչ մի խօսք չկայ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքի կամ կարգավիճակի հարցով հանրաքուէի մասին: Ընդհանրապէս, ոչինչ չկայ կարգավիճակի մասին: Սա ամենեւին էլ զարմանալի չէ, որովհետեւ երբ նախորդ տարուայ Յունիսի 22-ին համախաղաղողները բացառապատու մտքը արեցին ԼՂ բանակցային գործընթացի մասին, այնտեղ էլ ոչինչ չկար ԼՂ կարգավիճակի մասին»:

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ



Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Հովիւ Պատուելի Ճօ Մաթոսեան եւ Հայ Աւետարանական Համայնքի Հայկական Հարցերու Խորհուրդի ատենապետ Տիար Զաւէն Խանճեան, անցեալ Չորեքշաբթի, Նոյեմբեր 28ին, 2007, նախապէս առնուած ժամադրութեամբ մը պաշտօնական այցելութիւն մը տուին Փասատինայի Հնչակեան կեդրոնը:

Հիւրերը ջերմօրէն ընդունուեցան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ Գաբրիէլ Մոլոյեանի, «Մասիս» շաբաթաթերթի պատասխանատու խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեանի, Վազգէն Խոտանեանի եւ Վահէ Աջապահեանի կողմէ:

Կուժիւններ տուաւ վերանորոգութեան մէջ եղող կեդրոնի, ինչպէս նաեւ կազմակերպութեան հովանաւորութեան ներքեւ գործող կառուցներու մասին: Այնուհետեւ խօսակցութեան նիւթ դարձան հայութիւնը յուզող շատ մը այժմէական հարցեր: Առանձնապէս նկատի առնուեցաւ համագործակցին եւ Մայր Հայրենիքի կազմակերպութեանց իրավիճակը վերջին իրադրութեանց լոյսին տակ: Երկուստեք դատապարտեցին այլախոհներու եւ աղանդներու ներթափանցումը հայ իրականութեան ներս, որոնք ներհակ են մեր ազգային աւանդութիւններուն:

Շուրջ երկու ժամ տեւած սոյն հանդիպումն անցաւ բարեկամական, անկեղծ եւ սիրալիք մթնոլորտի մէջ:

«ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻՅՈՎ

Շարունակուած էջ 1-էն

Իր ընդվզումը կատարուած մասնաւորաբար վերոյիշեալ եւ Հայաստանի մէջ ընդհանրապէս լայն ծաւալ ստացած քաղաքական բռնարարներու դէմ, կոչ կ'ուղղէ Հայաստանի պետական իշխանութիւններուն, որ «ամէն միջոցի գործ դնեն իսպառ կասեցնելու նման անմարդկային եւ հակօրինական բռնարարներ, մեր հայրենիքէն մերս»:

Ամերիկայի Հայ Գրողներու Միութիւնը, նաեւ, կու տայ իր պատգամը հայրենի իշխանութիւններուն, թէ՛ «Հայաստանի հայեր անխորհրդաբար պէտք է ազատ ըլլան եւ իրաւունքներու ընտրաւարձներու մասնակցելու եւ զօրակցելու իրենց նախասիրած նախագահական որեւէ մէկ թեկնածուին»:

Մեր գոհունակութիւնը կը յայտնենք Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան՝ ոչ անպայման մեզի հետ զօրակցած ըլլալուն համար, մեր «Տիրումի Ուսանողական Միութեան» գոյգ պատանի անդամներու հանդէպ Հայրենի իշխանութիւններու ցուցաբերած բիրտ, այլապէս հակաժողովրդավար ոնրային վերաբերմունքին

ԿՈՉ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ (ՆԱՐԵԿ ԳԱՍՏԵԱՆԻ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԱՌԹԻ)

Մամլոյ հաղորդագրութիւններէն՝ սրտի խորունկ կսկիծով տեղեկացանք, որ Երեւանի մէջ վերոյիշեալ Նարեկ Գալստեան անուն քաղաքացիական զինուորական ծառայողի մահը պատճառով իր անձնական կեանքը կ'աւելցնէ իր անձնական կեանքը՝ կիսամեծ վիճակի մէջ:

Այդպէս ցիւ է եւ անհաւատալի որ ոնրային այս ամօթալի արարքը գործադրողները եղած են հայեր, եւ Երեւանի ոստիկանութեան վարչութեան պետ՝ Գեներալ Մայր Ներսէս Նազարեանը, նաեւ կեդրոնի ոստիկանապետ Մեհրաբեանը, համաձայն «Մասիս» շաբաթաթերթի վկայութեան:

Ոստիկանական բարձրատիտղոս այս իշխանաւորները, նման բռնարարի ենթարկած են նաեւ՝ տասներեքամեայ էտմոնդ Մակարեան անուն պատանին:

Այս պատանին եւս ծեծի ենթարկել է ետք, ոստիկան զօրաց այս գոյգ դեկավարները, ստորացման ենթարկելու մտօք ստիպել են երիտասարդին՝ որ ուտէ ի ձեռքին ոնեցած Հայաստանի Ա. Նախագահ Լ.ԵՈՆ ՏԷՐ Պետրոսեանի ընտրական թուցիկը:

Երկու մատաղ այս երիտասարդները եղած են անդամ «Սարգիս Տիրումի» Հնչակեան Ուսանողական Միութեան:

Այս անմեղ երիտասարդներուն վրայ գործադրուած վերոյիշեալ անգութ բռնարարներուն պատճառով այն է եղեր, որ անոնք Հայաստանի Ա. Նախագահ Լ.ԵՈՆ ՏԷՐ Պետրոսեանի նախագահական ընտրաւարձի թուցիկները կը ցրուէին:

Այսու մեր կոչն է եւ իղձը, որ Հայաստանի պետական իշխանութիւնները ամէն միջոցի գործ դնեն՝ ի սպառ կասեցնելու նման անմարդկային եւ հակօրինական բռնարարներ մեր հայրենիքէն մերս:

Հայաստանի համայն հայերը անխորհրդաբար պէտք է ազատ ըլլան եւ իրաւունք ոնեան ընտրաւարձներու մասնակցելու եւ զօրակցելու իրենց նախասիրած նախագահական որեւէ մէկ թեկնածուին: Այս նախագահական թեկնածուն կրնայ ըլլալ Լ.ԵՈՆ ՏԷՐ Պետրոսեանը, Սերժ Սարգսեանը, Ռաֆֆի Յովհաննէսեանը եւ կամ որեւէ այլ մէկ անձ:

Մեր հայրենիքէն մերս ընդմիշտ վերջ թող գտնեն ամէն կարգի բռնարարները եւ ապօրինութիւնները:

Ի Դիմաց
Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան
Թորգոմ Փօստանեան
Նախագահ

կապակցութեամբ, այլ, իրրեւ սփիւռֆահայ մտաւորականութիւն՝ մեր ազգի առաջ ծառայած հիմնահարցերուն լուծման մասնակից դառնալու նախանշաններ ցոյց տուող գնահատելի վերաբերմունքին համար:

Միշտ պատգամած ենք մեր այս սիրունակներէն, որ հայ գրողը չի՛ կրնար հանդիսատեսի դիրքերու վրայ մնալ մեր ժողովուրդի դիմագրաւած ազգային, եկեղեցական, ընկերային, քաղաքական,

ազգայնական ման եւ բարոյապէս անկումային երեւոյթներու առջեւ: Ներկայ հաղորդագրութիւնը մեր վրայ կը թողու այն տպաւորութիւնը, թէ հայ գրողը կը փորձէ գործօն ներկայութիւն դառնալ մեր ազգային թատերաբեմին վրայ:

Կրնուի սակայն կը զօրանայ, կ'ընդհանրանայ եւ վարակիչ կը դառնայ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան անհրաժեշտ, գործնական եւ միշտ սպասուած այս դրական մօտեցումը:

Massis Weekly on the Internet
www.massisweekly.com
updated every Friday

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHLALAH DANCERS

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB
626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՓԻԼԻՍՈՓՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՐՄԱՐ

Փիլիսոփայութեան Միջազգային Երրորդ Համագումարը տեղի ունեցաւ Գալիֆորնիայի Կլէնտէյլ քաղաքում Տէյս Ին հիւրանոցում, 2007 Նոյեմբերի 28-29ին, Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի (ՓՄԱ) նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ ԱՄՆ Ստանֆորդի Համալսարանի, ԱՄՆ Բերկլիի Գալիֆորնիայի Համալսարանի Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի, Երեւանի Պետական Համալսարանի, Երեւանի Սլավոնական Համալսարանի, ԱՄՆ Մետափիլիսոփայութեան Հանդէսի, ԱՄՆ Բլալուէլ Հրատարակչութեան: Կլէնտէյլում միջոցառումը իրացրեց կազմակերպիչ յանձնախումբը կազմուած հետեւեալ անհատներից, Տօքթ. Յարութիւն Սաղրեան, Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատրեան, Փրոֆ. Օշին Քէշիշեան, Տօքթ. Նուպար Մխիթ Գէորգեան, Դոկտ. Գէորգ Քէշիշեան, Տիկին Ալիս Մեյքեան, Պրն. Պօղոս Գուբէլեան: Համագումարին հրաւիրուած էին գիտնականներ, մտաւորականներ, գրողներ:

Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի (ՓՄԱ) նախագահն է Փրոֆ. Դր. Գէորգ Բրուտեանը, Երեւանի Պետական Համալսարանից համանախագահներն են Փրոֆ. Բարրի Ստրուդը, ԱՄՆ-Պըրքլիի Գալիֆորնիայի Համալսարանից, Փրոֆ. Էվանդելոս Մուցոպուլոս, Յունաստանի Աթէնքի Համալսարանից:

Կազմակերպիչ յանձնախմբի նախագահ Տօքթ. Յարութիւն Սաղրեանը ներածական խօսքով մեկնարկում է համագումարը, հրաւիրում է ՓՄԱ նախագահ Փրոֆ. Գէորգ Բրուտեանին ստանձնելու համագումարի նախագահութիւնը: Ողջոյնի խօսք են ասում Կլէնտէյլի Քաղաքապետ Պրն. Արա Նաճարեանը, Կլէնտէյլի նախկին քաղաքապետ Պրն. Լարրի Չարեանը:

Համագումարը մտնում է օրակարգային կարգընթաց:

Գիտաճառով հանդէս են գալիս.

Փրոֆ. Գէորգ Բրուտեանը, «Մետափիլիսոփայութիւնը որպէս փիլիսոփայութեան մետափիլիսոփայական գործառնոյթ»:

Փրոֆ. Ճորճիա Ապոստոլուպուլուն, Յունաստանի Աթէնքի Համալսարանի. «Կնատի սահմանազանցման փիլիսոփայութեան մետափիլիսոփայական հեռանկարը»:

Փրոֆ. Արմէն Մարտապեան, ԱՄՆ Մետափիլիսոփայութեան Հանդէսի խմբագիր «Ամերիկեան մետափիլիսոփայութեան արտացոլումների արմատները»:

Փրոֆ. Հանս Կոչլեր, Աւստրիայի Ինսբրուկի Համալսարանից, «Իմացաբանութեան հոլովոյթը որպէս մետափիլիսոփայութեան խնդիր»:

Փրոֆ. Էվանդելոս Մուցոպուլոս. «Արդի գեղարուեստական ստեղծագործութեան գործընթացը ըստ մետափիլիսոփայական նկատառումների»:

Փրոֆ. Ալեքսանդր Մանասեան, Երեւանի Պետական Համալսարանից. «Փիլիսոփայութեան մետափիլիսոփայական ինքնարտացոլման բնոյթի մասին»:

Փրոֆ. Յասմիկ Յովհաննիսեան, Երեւանի Պետական Համալսարանից. «Վիճարկութիւն եւ մետափիլիսոփայութիւն»:

Փրոֆ. Յակոբ Մադոյեան, Երեւանի Պետական Համալսարանից. «Արդի մտայնացոյթի վերգիտութիւնը (մետափիլիսոփայութիւն)»:

Փրոֆ. Դաւիթ Մոսիսեան, Երեւանի Պետական Համալսարանից. «Մետափիլիսոփայութեան նախամտայնացոյթները եւ դրանց զարգացումները Կանտից մինչեւ Հեգել»:

Համագումարի ընթացքում եղան հարցուպատասխաններ ընթերցուած գիտաճառերի արծարծած հարցերով:

Համագումարը եզրափակում է հիւրասիրութեամբ, որի ընթացքում լինում են մաղթանքների ու շնորհակալիքների խօսքեր: Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի նախագահ Փրոֆ. Գէորգ Բրուտեանի ձեռամբ կատարում է Հայոց Փիլիսոփայական Ակադեմիայի Դաւիթ Անյաղթ Շքանշանի բաշխում, որով պարգևատրում են, Կլէնտէյլի Քաղաքապետ Պրն. Արա Նաճարեանը, Պրն. Լարրի Չարեանը, Փրոֆ. Արմէն Մարտապեանը, Փրոֆ. Ճորճիա Ապոստոլուպուլուն, Փրոֆ. Հանս Կոչլերը, բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեանը, Գալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան նախագահ բանաստեղծ Գրիշ Դաւթեանը, արձակագիր Պօղոս Գուբէլեանը, երաժշտագէտ Հենրիկ Անասեանը, Հայ Ընկերութեան հիմնադիր Հրաչ Աճէմեանը, Տօքթ. Նուպար Մխիթ Գէորգեանը, Տօքթ. Յարութիւն Սաղրեանը:

ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ձեմարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահութեամբ, Մկրտիչ Ա. Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահուան 100-ամեակի կապակցութեամբ բացուեց Խրիմեան Հայրիկի կիսանդրին եւ տեղի ունեցաւ հանդիսութիւն:

Արարողութեան սկզբին բացման խօսք ասաց Տ. Եղիշէ աւագ քահանայ Սարգսեանը, ապա հրաւիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ կատարելու կիսանդրու բացումը, որից յետոյ Գէորգեան Հոգեւոր ձեմարանի դահլիճում տեղի ունեցաւ հանդիսութիւն՝ նուիրուած Խրիմեան Հայրիկին:

Հանդիսութեան ընթացքում ելոյթ ունեցաւ Գէորգեան Հոգեւոր ձեմարանի տեսչի պաշտօնակատար Տ. Սահակ Վրդ. Մաշալեանը, ով իր խօսքում ընդգծեց, որ արդի իրականութեան մարտահրաւէրներին դիմակայելու համար ամենակարեւորը Խրիմեանի օրինակով ազգային, հոգեւոր եւ մշակութային արմատներին հաստատուն մնալն է. «Մեր փոթորկալից պատմութիւնը վկայում է, որ ամենակարեւորը մեր ազգային, կրօնական եւ մշակութային արմատներն են: Բանկերը, շէնքերը, ճամբարները, տնտեսութիւնը, տուրիզմը, տեխնոլոգիաները եւ այլ առօրեայ հարստութիւններն անշուշտ կարեւոր են, բայց մեր պատմութիւնը փաստում է, որ երբ սրանք հարուածի տակ են յայտնուում, մեր ազգն իր արմատներից է վերստին ընձիւղում: Այլապէս ինչպէ՞ս բացատրել Մեծ Եղեռնից, խորհրդայնացումից, սփիւռքեան ձուլումից ու այլասերումից յետոյ մեր ապրած ազգային ու հոգեւոր վերելքը: Այս աշխարհում ազգերի միջեւ տեղի ունեցող գոյատեւման դաժան պայքարում որոշիչ դերակատարութիւնը արմատներն են ունենալու»: Տեսուչ Հայր Սուրբը նշեց, որ Խրիմեան Հայրիկ Կաթողիկոսը մեր ներկան սնուցող արմատներից մէկն է, որ իր նման բիւրաւոր արմատների հետ ապահովում է մեր ազգի կենսականութիւնը: Տեսուչը, շնորհակալութիւն յայտնելով ձեմարանին տրուած



թանկարժէք նուէրի համար, նշեց, որ այն ներշնչումի աղբիւր պիտի լինի ուսանողութեան համար՝ յիշելու, թէ ինչպիսի՞ գոհողութիւններ են պէտք մարդ լինելու, հայ մնալու եւ քրիստոսանման ապրելու համար:

Այնուհետեւ «Խրիմեան Հայրիկը՝ եկեղեցականի տիպարի մասին» բանախօսութեամբ հանդէս եկաւ ԳԱԱ Պատմագիտութեան ամբիոնի վարիչ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր տիկին Էմմա Կոստանդեանը:

Հանդիսութիւնը եզրափակուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան խօսքով: Նորին Սրբութիւնը, անդրադառնալով այն մեծ սիրուն ու յարգանքին, որ տածում էր հայ ժողովուրդը Խրիմեան Հայրիկի նկատմամբ, ընդգծեց այն անմնացորդ նուիրուածութիւնն ու վաստակը, որով մեծ Հայրապետը ընծայուած էր ժողովրդին ու Եկեղեցուն. «Հայրական ինամքը Աստուծոց իրեն վաստակած ժողովրդի հանդէպ Մկրտիչ Ա. Խրիմեան Հայրապետը նոյն նախանձախնդրութեամբ պահպանեց մինչեւ խոր ծերութիւնը: Իր հոգու վրայ կրած բազմաթիւ վշտեր ու նեղութիւններ, որոնք բաժին էին ընկել մեր ժողովրդին, մեծ Հայրապետը աննվազ ջանքեր բերեց հոգեւոր դպրեվանքների բարեգարգմանը, թեմական եւ համայնքային վերակազմանը, եկեղեցական եւ ազգային կեանքի բարեփոխմանը՝ միշտ մնալով լուսաւորութեան, գիտութեան ու

Շար.ք էջ 19

1975-2008
33th
ANNIVERSARY

Life, Health, Group Health
Disability, Long Term Care

NEW YORK LIFE

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՍԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

ՐԱՅ ԴՊՐՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ «ՅՈՎԱՍԷՓԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

ԼԻԶԱ ՄԱՆՈՅԵԱՆ

Հայկական դպրոցի նպատակն է հայապահպանում ու հայ դպրոցը կը հանդիսանայ հայ ժողովուրդի գոյատևումին սատարող գործուն օրրաններին մէկը: Ամէն հայ ուսուցիչ-ուսուցչուհի, ի գին բարձր

դիտութիւնը տեղի ունեցաւ Նոյեմբեր 9ին դպրոցիս «Գալուստեան-Տունայեանց» սրահէն ներս: Հանդիսութեան բացումը կատարեցին օրուան հանդիսավարները՝ Զ. կարգի աշակերտներ Լենա Սարգիսեան ու Ճորճ Բարսեղեան: Ապա երաժշտութեան ուսուցչուհիին ղեկավար



photo by H. Berberian

գոհողութիւններու, Հոկտեմբեր ամսուան ընթացքին կատարուելիք հանդիսութիւնները կը նկատէ ամէնէն շինիչ աշխատանքներէն մէկը, աշակերտութեան մօտ հայկական ոգիի աշխուժացման ու հարուստ մաշակոյթի հանդէպ իրենց սիրոյ ու յարգանքի արտայայտման յարմարագոյն առիթներէն մէկը: Հոկտեմբեր ամսուան ընթացքին մեր վարժարանէն ներս քանի մը առիթներով աշակերտները բարտաւորութիւնը ունեցան մօտէն ծանօթանալու ու հաղորդուելու իրենց մշակոյթով:

Փաստինայի «Համազգային»ի «Շահան Շահնուր» մասնաճիւղին ախաճեռնութեամբ, դպրոց այցելեց հայկական ժողովրդային երաժշտական գործիքներու «Արարատ» նուագախումբը: Տպաւորիչ էր տեսնել աշակերտութեան մօտ ստեղծուած խանդավառութիւնը, որ մղեց գիրենք շրջանակ կազմելու ու շուրջպարերով ընկերանալու հայկական դէպք, գուռնայի ու սրինգի անոյճ եղանակներուն:

Աշակերտներուն համար հաճելի անակնկալ մըն էր նաեւ, Հ.Բ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ, հայրենիքէն ժամանակ «Հայորդաց» երգչախումբի ու պարախումբի դպրոց այցելութիւնը: Աշակերտները իրենց հայրենիքի տաղանդաւոր քոյրերուն ու եղբայրներուն հետ ծանօթացան, մտերմիկ գրոյցներ ունենալով դպրոցի ճաշասեղաններուն շուրջ ու ապա միասնաբար խաղալով դպրոցի խաղավայրին մէջ: Աշակերտները նաեւ հիացումով ու գնահատումով հանդիսատես եղան «Հայորդաց»ի ներկայացուցած հայկական պարերուն ու մարմնամարզական ճկուն շարժումներուն:

Դպրոցէն ներս, Հոկտեմբեր ամսուան ընթացքին, աշակերտները իրենց ուսուցիչ-ուսուցչուհիներու ղեկավարութեամբ կազմակերպեցին հանդիսութիւն մը՝ Մշակոյթի ամսուան նուիրուած: Հան-

րութեամբ, մանկապարտէզէն չորրորդ դասարանի աշակերտները երգեցին «Մերոպեան տառեր» երգը, որմէ ետք է. կարգի աշակերտուհի Ալիսըն Քէշիշեանը մենապարով մը՝ Արա Գէորգեանի եղանակներէն մէկուն ընկերակցութեամբ, հիացուց հանդիսատեսները իր նուրբ ու ճկուն շարժումներու:

Երրորդ դասարանի աշակերտները ներկայացուցին Յովհաննէս Թումանեանի «Անխելք մարդը», որ բեմականացուցած էր իրենց հայերէն լեզուի ուսուցչուհին, իսկ Զ. կարգի աշակերտներէն խումբ մը ներկայացուցին նոյն հեղինակին «Կիկոսի մահը», որը թատերական գործի վերածուած էր Սարգիս Մահսէրէճեանին կողմէ: Հաճելի էր դիտել մեր աշակերտներուն դերակատարումները: Անոնք հարգատօրէն կրցան ներկայացնել իրենց ստանձնած կերպարները եւ գուարթութեան ու խնդուքի հաճելի պահեր նուիրեցին իրենց ծնողներուն:

Ապա, Ե., է. եւ Ը. կարգի աշակերտները չաջորդականութեամբ իմբային կերպով արտասանեցին խաչիկ Դաշտենցի «Խօսէ հայերէն» եւ Վահան Թէքէեանի «Տաղ հայերէն լեզուին» ոտանաւորները: Մթնոլորտը աւելի խանդավառուեցաւ երբ Զ. կարգի աշակերտուհիներէն Սինթիա Ալպարեան, իր ձեռքի ու դաստակի գեղեցիկ շարժումներով, մենապարով մը դիւթեց բոլորս:

Հանդիսութեան վերջին բաժնով Ե.-Ը. կարգի աշակերտները երգեցին Գ. Չթէեանի «Մայրենի լեզու» երգը, թնդացնելով սրահը: Հանդիսութեան ընթացքին Զ. կարգի աշակերտներէն Ալէքս Պէրպէրեանն ու Սեւակ Ռեզեանը դաշնակի վրայ նուագեցին կոմիտասեան մեղեդիներ:

Յայտագրի աւարտին դպրոցիս տնօրէն Շահէ Մանկրեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք սատարած էին այս յայտագրի յա-



photo by H. Berberian

ջողութեան, եւ ըսաւ. «Իրապէս հաճելի էր ակատես ըլլալ մեր աշակերտներուն ունեցած կարողութեանց ու տեսնել, թէ ինչպէս, իրենց հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու այս երկրին մէջ, սահունօրէն ու հեզասօրէն կ'արտայայտուին իրենց մայրենի լեզուով»:

Տնօրէնէն ետք խօսք առաւ, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հովիւ Պարէա Մ. վրդ. Երէցեանը, որ գնահատեց դպրոցի տնօրէնութեան ու ուսուցչակազմին տարած ազգանուէր բոլոր աշխատանքները, որոնց նպատակակէտն է հայկական ոգին վառ

պահել եւ ազգային գիտակցութիւն ու պատկանելիութիւն սերմանել աշակերտներուն մօտ:

Առաւել հեշտ պատրաստուող, առաւել հեշտ ընկալուող եւ բնական է, որ ժողովրդի լայն խաւերին հասնող երգի տեսակը առաւել շատ է տարածուել: Ֆասլները սկսել են յօրինուել միայն երգի ձեւով: Եւ այդպէս, այդ ժամանակաշրջանից, այսինքն՝ 20րդ դարի կեսերից սկսած հայ երգահանների ստեղծագործութիւնները մեր ֆասլը երաժշտութեան մէջ շատ կարեւոր տեղ են գրաւել:

Մօտ 60 տարիներից ի վեր շարունակուել է հնչել շատ սիրուած հնագոյն եղանակով երգերի հետեւեալ տեսակները, հիճազը, հիւզգամը, սեկահը, ռասթը, ուշաքը, գիւրտիլի հիճազ գեարը:

Ֆասլին նուիրուած համերգային բոլոր ծրագրերում անպայման հնչել եւ նուագուել են Նիկողոս Աղայի, Պիմէն Շէնի կամ Թադէոս Էֆենտիի մի քանի ստեղծագործութիւնները»:

Մրազրի վերջում (պիսով) կրկնականչով կատարուեցին Պիմէն Շէնի՝ «Գիտեմ, որ դու դեռ ես շատ փոքր ես» եւ «Երեսու ուրախ, յիշատակ ուրախ» երգերը:

ԱՅԺՄԵԼԱԿԱԳ ՆԻԹԵՐ

**ՅԻՇԵՆԵ ԱՆՅԵԱԼԸ, ԱՊՐԻՆԵ ԱՅՍՕՐԸ,
ՅՈՒՍԱԴՐՈՒԻՆԵ ԱՊԱԳԱՅՈՎ**

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔԶՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Օրերը, շաբաթները, ամիսները յաջորդաբար կը շտապեն կատարելալ իրենց լուռ ու խորհրդասքող անցքը:

Եւ մենք կլանուած ամենօրիայ պարտականութիւններով՝ չենք նկատեր ժամանակին փախուստը:

Արդարեւ, որքան արագ կ'անհետահայ ամէն ինչ, որ յաւիտենական չէ:

Տարին, որ անցաւ, կարծես թէ հագիւ սկսած էր: Աս ալ անշուշտ իր նախորդներուն պէս պիտի սուզուի անցեալի խաւիարակուռ վիճին մէջ ու պիտի երեւայ ուրիշ տարի մը մեր անցողական կեանքի սահմանափակ հորիզոնին վրայ:

Ի՞նչ կը բերէ մեզի առանձնապէս այս Նոր Տարին, որ կը ժամանէ նորահարսի մը գեղաճաճանչ շքեղութեամբ:

Արդեօք մեր փոխանակած մարթանքները պիտի իրագործուին յաջողութեամբ, որ շատ լաճախ յուսահատօրէն կը հերքուին: Ինչպէս լաւ օրերը յայտնի կ'ըլլայ առաւօտէն, այնպէս ալ Նոր Տարին յայտնի կ'ըլլայ ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆ:

Մեր ապագան այլամերժօրէն կախում ունի ԱՅՍՕՐԻՆ, թէ ինչպիսի մաքառումներով պիտի իմաստաւորենք ժամանակի յուրաքանչիւր վայրկեանը, որ ակնթարթի արագութեամբ կ'անցնի եւ յոյս չկայ, որ կրկին ետ գայ եւ ըլլայ իր արժէքով ՆԵՐՎԱՅ:

Ինչ որ ցանենք այսօր, ատիկա պիտի հնձենք վաղը: Չենք կրնար քաղել բան մը, գոր նախապէս չենք սերմանած:

Պայքարն ալ հոգեկան դաշտերու վրայ՝ ամենօրեայ սերմնացանութիւն է: Նուիրեալ ջանքերով կը կոփուին ազամանդեայ նկարագիրները, պողպատէ կամքերը, հրեղեն հոգիները: Այս պայքարը սուրբ է ու կը մղուի առանց նահանջի եւ առանց յուսահատութեան հետ պայմանաւորուելու: Անով է, որ մահացողօրէն պիտի հարուածենք սուտը, պիտի քողազերծենք կեղծիքը, պիտի հարթենք դժուարութեանց խութերը ու արմատախիլ պիտի ընենք մեր էութեան մէջ աճած մոլորութեանց որոմները:

Եթէ կրցանք ժամանակի մէն մի ըրպէի օգտագործումով իմաստ տալ մեր տեսական ձգտումներուն եւ ապրիլ վաղուան օրը ԱՅՍՕՐ, ալ յուսահատութիւնը, որքան ալ ալիքի պէս ուռի մեր մէջ եւ մեր շուրջը, երբեք պիտի չյաջողի փշրել մեր կամքը: Միւրոյ բոլոր գորշերը սերմնահատիկներ են, որոնք կը սաղմնաւորուին, կը բողբոջին ու կը պտղաբերին առաքինութեան արգաւանդ հողերուն վրայ:

Աստուծոյ հաւատքով ջահաւորուած բարեպաշտը լաւ գիտէ, թէ իր ներկայ կեանքը ազուցած է յաւիտենականութեան հետ:

Ան՝ անցեալի հարուստ փորձառութեանէն կ'առնէ իր խորհուրդները ներկային համար ու առաւել զօտեպնդուած կ'ուղեւորի դէպի ապագան, որ իրեն համար այլեւս անապահով նշանակակէտ մը չէ, որ հիասթափուի:

Անոնք որ անիմաստ յետաձգումներով կը սպառեն իրենց կեանքին թանկագին օրերը եւ ամէն կենսական գործ կը թողուն վաղուան, վստահօրէն կը կորցնեն թէ՛ իրենց այսօրը եւ թէ՛ իրենց ապագան:

Ոչ մէկ բան կ'աճի ու կը պտղաբերի վաղուան մէջ, եթէ այսօրուան բերրի հողերուն շէնք յանձնած սերմերը:

Անցեալի մէջ խորահայեաց խուզարկում մը՝ պիտի օգնէ մեզի, որ լիովին ճանչնանք մեր ինքնութիւնը իր սխալներով ու սայթաքումներով, որոնք հավանաբար աւելի մեծ կորուստ պատճառած են անմեղներու քան թէ մեր շահերուն:

Անցեալը շատ բան կրնայ ըսել մեզի ու մերթ այնպիսի ցնցիչ բաներ, որ իրաւամբ կրնանք մեզ խաչելութեան արժանի համարել: Անցեալը մեր գերագանց դաստիարակն է եւ ամէնէն իմաստուն ու վստահելի խորհրդատուն:

Աշխարհի վրայ միայն մահկանացու մարդն է, որ պատմութիւն ունի, թէ որպէս անհատ եւ թէ որպէս ազգ: Բիւր արիստոս այն մարդուն, որ Ամանորեա ցնծութիւններուն մէջ բոլորովին կը մոռնայ անցեալին արժէքը եւ չ'ուզեր օգտուիլ անոր ընծայած հարուստ փորձութիւններէն:

Չենք կրնար որեւէ փաստարկութեամբ ժխտել անցեալը, պարզապէս անոր համար, որ անցեալ է: Պէտք է ըրջօրէն անդրադառնանք, սերտենք, ուսումնասիրենք ու դատենք գայն: Եթէ դատողութիւնը մոռայ նկատումներով կ'օտուած չէ, ան՝ որոշապէս պիտի ցոյց տայ քեզի, թէ ինչ բան անցեալիդ մէջ գանձ է ու ինչ բան ժանդ: Հօրդ թողած ժառանգութիւնն ալ անցեալէն կու գայ, բայց երբ չես արհամարհեր գայն:

Մարդիկ կան ղեկավարութեան դիրքերու վրայ, որ իրենց նայուածքը չեն բաժաներ հեռաւոր անցեալէն, միայն անով կը սնանին, անով կը սպառազինուին եւ անկէ կ'առնեն,

որ թէ ժողովուրդին համար օգտակարը, այլ ինչ որ կայ հոն անպէտք, մզլոտած ու հանրապնաս:

Անոնց պայքարն է այս օրերուն շինած գաղափարախոսութիւններով հոգիները փոթորկել եւ խեղաթիւրուած իրողութիւններով հրապարակը ժխտել: Չկայ բան մը անոնց մեծաբերան արտայայտութիւններուն մէջ, որ ներկան լուսաւորէ ոչ ալ բան մը, որ ապագայի մէջ ճաճանէ:

Չեմ ըսեր, թէ մոռանանք ներկան ու ապագան եւ անցեալին վերադառնանք: Աշխարհը այսօր բարբերու բորոտութիւն կը բուրդ եւ կարելի չէ ներկայ կեանքին տուած աղբերով հիմնաւորել ապագան:

Անոնք որ ինքնաշարժ կը քշեն՝ իրենց ուշադրութիւնը սեւեռած չեն պահեր միայն առջեւէն սուրացող կառքերուն վրայ: Մերթ ընդ մերթ կողմնակի հայելիին կը նային, թէ ինչ կայ իրենց ետեւը: Ահաւոր սխալ կը գործենք, եթէ շարունակ առջեւ նայինք ու անտեսենք ետեւէն եկող կառքերը:

Գողերն անգամ, երբ դրամատուն մը պիտի կողոպտեն, ապահով յառաջանալու համար, ուշադիր ետեւ կը նային:

Չենք կրնար անցեալը բաժանել ներկայէն եւ ոչ ալ ներկան ապագայէն: Աստուծոյ անփոխարինելի պարգեւն է ժամանակը իր երեք անխզելի բաժանումներով:

Աշխատինք ու պայքարինք որ ԲԱՐԻՆ հոսանքը հեղեղանայ 1997-ի յոյսերու եւ իղձերու արեւածագին:

Անհրաժեշտ է, որ այսօր կատարուի ՎԵՐԱԴԱՐՁ ՄԸ: Եւ պէտք է հաւատանք, որ մեղքին վրայ կատարուած վերադարձը՝ ամօթ ու ետադիմութիւն չէ, այլ յառաջադիմութիւն ու յաղթանակ: Միայն այդ վերադարձի ճամբուն վրայ կրնան հերոսանալ բոլոր հայերը, հատուածական ու դաւանական ինչ

ուղղութիւն ալ ունենան: Այդ ճամբան է լոյսի ու ճշմարտութեան, որ հայութիւնը կ'առաջնորդէ դէպի անբեկանելի միասնականութիւն եւ իր դարաւոր իրաւունքներուն ու իտէալներուն պսակումին:

Եթէ մարդիկ նախապէս գիտնային իրենց կեանքի տեւողութեան տարիներուն քանակը, ըստէ մը անգամ ի գուր չէին վատներ իրենց ժամանակէն:

Շատ հայ մարդիկ այսօր պատասխանատու դիրքերու վրայ ցաւ կուտան հայութեան եւ սխալ ուղղութիւն անոր ճակատագիրին:

Անոնք երեսանկեալ թողուած են անիրաւ շահերու մէջ ու կը գործեն մետաղացած իտէալներով:

Ո՛վ բարի ու բանիմաց ընթերցող, անոնք ժամանակ չունին քեզ նման հայերէն թերթ ու գիրք կարդալու:

Դուն եւ՝ քու պարզ ու համեստ դիրքովդ՝ հայ ժողովուրդին հարազատ գաւակը, որ գործաւորի լուծալովդ թերթ կը գնես, մոմ կը վառես, անդամատուրը կուտաս, արուեստագէտներ ու մտաւորականներ կը քաջալերես, տօնական օրերը կը յարգես, լեզուդ ու ծագումդ հայադրոջ կը պահես, հայրենի ժողովուրդիդ տազնապներով կը տուայտիս, հայրենիքդ կը սիրես եւ ազատ ու անխախ Հայաստանին փառքը կը գովերգես:

Դուն փոքրաթիւ ես քանակով, բայց մեծահարուստ ես որակով: Երբեք քանակը չէ յաղթած որակին ու պիտի չյաղթէ, ինչպէս մութը հոգիին:

Յաւիտանական ճշմարտութիւններ են ասոնք եւ հայ ժողովուրդին տիտանեան մաքառումներուն ապառաժեայ ամբողջութիւնները, որ գոյատեւում կուտան իր եղբրաբար կեանքին:

Նոր Տարին քեզի համար է իր

Շաք.ը էջ 19

**Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրեպետի անուան տօնին
եւ
Լոս Անճելըսի Ս. Յակոբ Եկեղեցւոյ անուանակոչման եւ
Հիմնադրութեան 66րդ տարեդարձին, ինչպէս նաեւ
Արեւմտեան Թեմի Հաստատաման 80 ամեակներուն առթիւ
Ուխտագնացութիւն**

Սուրբ Յակոբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի
4950 W. Slauson Ave. Los Angeles, CA 90056
Հեռաձայն՝ 323-295-4588
[http:// www.armenianchurchla.com](http://www.armenianchurchla.com)

**Նախատօնակ՝
Շաբաթ, 15 Դեկտեմբեր, 2007 Երեկոյեան ժամը 7ին**

**Եպիսկոպոսական Հանդիսաւոր Ս. Պատարագ եւ սարկաւագի
ձեռնադրութիւն Կիրակի, 16 Դեկտեմբեր, 2007**

**Պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ
ԳԵՐՇ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Առաջնորդ՝ Հայց. Առքլ. Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի**

Կը հրաւիրենք մեր գաղութի բարեպաշտ գաւակները, ներկայ գտնուելու եւ մասնակցելու Ս. եւ Անմահ Պատարագին եւ լսելու առաջնորդ սրբազան հօր պատգամը
Յաւարտ՝ Ս. Պատարագի Անուանակոչման տօնախմբութիւն,
Եկեղեցւոյ «Կոկեան» սրահին մէջ:

ՄՇԱԿՈՅԹ

ՀԱՅ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՕՆԸ

ՀԱՅԿՆԱԳԳԱՄԵԱՆ

Գոհար անուանուած շուրջ 150 հոգինոց երգչախումբը-նուագախումբը-պարախումբը բառին իսկական առումով գոհար մըն է հայ արուեստի մասուցման ճամբուն վրայ երկրէ երկիր հիասքանչ գնահատանքին արժանանալով հայ եւ օտար հազարաւոր ունկնդիրներուն: Հիւսիսային ամերիկեան ցամաքամասին վրայ տեղի ունեցած ութ համերգներուն վերջընթերցող տեղի ունեցաւ 18 Նոյեմբերին, Մոնթրէալի Փլաստէ զԱրի մէջ, շուրջ 3000 ունկնդիրներու նրկալութեան:

Ժամը ծին երբ բեմը լուսաւորուեցաւ, մեր աչքին առջեւ պարզուած կարգու կանոն, որակ եւ ճաշակ արտայայտող պատկառազու տեսարանը բուռն ծափերով դիմաւորուեցաւ՝ իբրեւ կանխավճար այն վայելքին, որ պիտի ունենայինք երկու ժամերու ընթացքին: Անմիջապէս յետոյ ծափերու նոր տարափով մը դիմաւորուեցաւ վաստակաւոր երաժշտագէտ ու խմբավար Սեպուհ Աբգարեանը, որ պատշաճ խոնարհութենէ մը ետք անցաւ յայտադրին գործադրութեան: Վստահաբար ձեր մօտ դեռ կը պահէք պատկերազարդ եւ բարձրաճաշակ յայտադիրը, որուն իւրաքանչիւր բաժնին ու մասնակիցներուն մասին գովասանք շուսլելէ պիտի հրաժարիմ, քանի որ հանդիսատեսներու որոտընդոտ ծափահարութիւնները ապացոյցն էին անոնց գնահատանքին: Յայտադրին հիանալի գործադրութենէն անկախաբար, ան-

ջինջ պիտի մնայ նաեւ այն տեսարանը որ երգչախումբի եւ սենֆոնիք նուագախումբի աւելի քան 150 անդամն երբ իրենց կեցուածքով, հագուածքով ու գոյներով լիշեցուցին շուրջ քառասունամեակ մը առաջ Պէյրութի առաջնակարգ բեմերուն վրայ ելոյթ ունեցող Հայաստանի Պետական Երգի ու Պարի Անսամպլը: Եւ ոչ միայն իբրեւ արտաքին տպաւորութիւն, այլ նաեւ կատարում, որակ ու ճաշակ: Որքան որ գնահատելի՝ գարմանլի չէր արուեստով յագեցած խորհրդային Հայաստանի պետութեան նիւթական ու բարոյական քաջալերանքով կազմուած այդ խումբը, որ իր համասփիւռքեան կատարումներով արուեստի վայելքին գուգահեռ ազգային գիտակցութիւնը եւ հայրենասիրութիւնը տարածեց ու ամրապնդեց:

Իսկ Գոհար... Անիկա ընդհանրապէս կիւմրեցիներէ բաղկացած խումբ մըն է՝ երկրաշարժով աղիտահար եղած հերոսական քաղաքին զաւակները, որոնք սեւ ճակատագրին վրայ խնդրով կեանք եւ հրճուանք կը բաշխեն հայաշխարհին: Բարբերութեան նոր եւ արդիւնաւէտ մօտեցումով մը ինչպէս արուեստը եղբայրները փոխանակ աղքատախնամ գումարներ բաշխելու, կազմակերպեցին այս խումբը, անոր անդամները ապահովելով մնայուն եկամուտով, աշխարհը պտտելու կարելիութեամբ եւ հոգեկան գոհունակութեամբ: Արդէն վաղուց հանգուցեալ իրենց Հայրը՝ Արամ ինչպէս արուեստը, համեստ մե-



գոնեանցի մը, բայց նաեւ խիզախ եւ յաջողակ առեւտրական մը, ասկէ աւելի մեծ ծառայութիւն չէր կրնար մատուցել իր ազգին, քան այսպիսի զաւակներ նուիրել անոր: Եւ ինչ հիանալի գուգադիպութիւն է որ անոր զաւակներն ու այրին հայ ազգին կը ծառայեն այն ճամբով, որով իրենց հօր անուանակից, հայ ազգի մեծհուշակ երաժիշտ Արամ ինչպէս արուեստը աշխարհը նուաճեց: Իսկ այս ընտանիքին հիանալի նախաձեռնութիւնը արուեստի կատարելութեան հասցնողը եղաւ ուրիշ Մելգոնեանցի մը՝ Մելգոնեան ուսանած եւ հոն ուսուցչութիւն ըրած, երաժիշտ եւ խմբավար Սեպուհ Աբգարեանը: Ան իր երաժշտական տաղանդով, գեղարուեստական ճաշակով ու կազմակերպական կարողութեամբ նուաճեց մակարդակ մը, որ մեզի կը լիշեցնէր խորհրդային Հայաստանի Երգի ու Պարի Անսամպլի մակարդակը, պե-

տական հովանաւորութեան փոխարէն ունենալով ինչպէս արուեստը ընտանիքին նիւթական ու բարոյական թիկունքը: Հայկական հնաբոյր եւ նոյնիսկ մոռցուած երգեր նոր դաշնաւորումով վերակենդանացնելով Ս. Աբգարեան Կոմիտաս վարդապետին արժանաւոր յաջորդը եղաւ աւելի մեծ քայլերով եւ աւելի լայն հորիզոններուն վրայ: Կարելի՞ է այս առթիւ չլիշել որ այդ վարժարանը, ուր Արամ ինչպէս արուեստը եւ Սեպուհ Աբգարեան իրենց ուսման հետ նաեւ ազգային ոգի ու կրթութիւն ստացան, փակուած է 2005 Յունիսէն ի վեր, հայ ազգը զրկելով այնպիսի զաւակներ ունենալու կարելիութենէն: Սոյն գրութեամբ իմ հիացումս եւ գնահատանքս կը յայտնեմ ինչպէս արուեստը ընտանիքի ազգօգուտ նախաձեռնութեան, եւ յարգանքս վաղամեռիկ բարեկամիս՝ Արամ ինչպէս արուեստի լիշատակին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՆ-Ի ԿԵՆՏՐՈՆԻ

Ազգովին կանգնած ենք ճակատագրական հանգրվանի առջեւ եւ որպէս Հայաստանի Հանրապետության բարորության ու արժանապատիվ ապագայով մտահոգ հայեր մեր պատասխանատվութեան բաժինն ունենք այդ մարտահրավերների հաղթահարման գործում:

Բոլորս գիտակցում ենք, որ մեր հայրենիքի՝ որպէս ժողովրդավար ու իրավական պետություն դառնալու միակ գրավականը ավագակապետական ներկա համակարգի վերացումն է: Իսկ այդ նպատակին հասնելու միակ ճանապարհը միասնական ուժերով պայքարն է՝ Հայաստանը անդունդ առաջնորդող ավագակապետական վարչակարգի դեմ:

Այդ առումով, մենք՝ ԱՄՆ-ում բնակվող հայերս, դրական ենք գնահատում ՀՀ նախկին նախագահ ԼՏՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ քաղաքական ասպարեզ վերադառնալու, ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելու փաստը և պատրաստակամությունը հայտնում աջակցելու նրան գալիք ՀՀ նախագահական ընտրություններում:

Այնհայտ է, որ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ առաջադրումը խուճապի է մատնել ներկա իշխանություններին ստիպելով նրանց սկսել ահաբեկման ու հետապնդման արշավ բոլոր այն անհատների ու կազմակերպությունների նկատմամբ, որոնք բացահայտ գորակցություն են հայտնել ՀՀ առաջին նախագահին:

Այսօր բացառիկ պատմական հնարավորություն ունենք՝ քոչարյանաւերժական ավագակապետությունից մեկ անգամ ընդմիջ ազատվելու, մեր պետությունը կայուն զարգացման ճանապարհի վրա դնելու ու ժողովրդավարությունը անշրջելի համակարգ դարձնելու առումով: Սակայն ինչպէս նախկին փորձը ցույց է տալիս, իշխանությունը անօրինական ճանապարհով զավթած այս մարդկանց խումբը վերարտադրելու համար գործադրելու է զեղծարարության ու բռնության ամեն միջոց մինչև հասնի իր նպատակին:

Որպէս Ամերիկայի Միացյալ Նահանգներում բնակվող ՀՀ քաղաքացիներ եւ Հայաստանի Հանրապետության ճակատագրով մտահոգ հայեր պարտավոր ենք, մեր հնարավորության սահմաններում, աջակց լինել բոլոր նրանց ովքեր միավորվելով ՀՀ առաջին նախագահի շուրջ պայքարի դրոշմ են բարձրացրել այս վարչակարգի դեմ: Ուստի այդ նպատակի համար ՀՀ առաջին նախագահին սատարող ամերիկահայերս Լոս Անջելեսում հիմնադրում ենք ՀՀ Նախագահի թեկնածու՝ ԼՏՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ աջակցության ԱՄՆ-ի Կենտրոն:

Ուղիկ Հովսեփյան «Վարագույր» հեռուստաժամի տնօրէն

Համբարձում Սարաֆյան ՍԴՀԿ Ամերիկայի ԱրՏմտյան շրջանի Վարիչ Մարմնի փոխատենագետ,

Կարո Կարապետյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության Նախագահ, Փաստաբան

Հրանտ Թումասյան «Հանրապետություն» կուսակցության ներկայացուցիչ, ազատամարտիկ

Անահիտ Մարտիրոսյան «Անահիտ Շուր» հեռուստատեսային ծրագրի ղեկավար

Հովհաննես Բալայան «Քաջ Նազար» հեռուստատեսային ծրագրի ղեկավար

Նունե Ավետիսյան «Քարե» հեռուստատեսային ծրագրի ղեկավար

Ռուբեն Դավթյան ՀՀ առաջին նախագահի անվտանգության ծառայության նախկին աշխատակից, «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության Փոխնախագահ, ազատամարտիկ

Երան Գաղարյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության խորհրդի անդամ

Սմբատ Առուստամյան ՀՀ առաջին նախագահի անվտանգության ծառայության նախկին աշխատակից, «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության խորհրդի անդամ

Գրիգոր Գեվորգյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության խորհրդի անդամ, գործարար

Ալվարո Գեվորգյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության անդամ

Օֆելյա Վահրադյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության վերահսկող մարմնի անդամ, Գլենդելի Հանրային Քոլեջի ուսանող,

Անդրանիկ Կարապետյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության անդամ, գործարար

Լեվինե Ալեքսանյան «Հայ Քաղաքացիական Հասարակություն» Մարդու Իրավունքների Պաշտպանության Ընկերակցության անդամ, գործարար

ՀՀ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՀՀ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅ
Լեւոն Տեր **Պետրոսյան**

www.levon4president.com

www.levonforpresident.com/am/

«ԱՅՍ ՇԵՆՔԸ ՈՐՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ Է, ԲԱՅՑ ԻՄ ՏՈՒՆԸ ՉԻ»

ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆ
(ՊԱՐՄԿԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝
ՆՈՒԱՐԳՋԱՐԳԱՐԵԱՆ)

Սիրելի ընթերցող
Այս թեման իմ անձնական կարծիքն է կեանքի վերաբերեալ որը արդիւնքն է իմ կենսափորձի, պապենական ընտանիքիս փորձն ու օրինակը, նոյնպէս արդիւնքն է տարբեր մարդկանց, տարբեր երկրներում որը ուսումնասիրել կամ ընթերցել եմ, մինչեւ ներկայ խաժամուժ ժամանակները: Յարգելով ընթերցողներին եւ մարդկանց գիտական եւ հասարակական գիտաշխատողներին տեսակէտներն ու կարծիքները՝ եւ ամբողջացնելով իմ մտքերն ու տեսակէտները, ահաւաստիկ մատուցում եմ ձեզ սիրելի ընթերցողներ, թողնելով ձեր անհատական գնահատանքին ու աշխարհայեացքին: Շարունակաբար տեսակցութիւններն ու տարեցներին եւ անկեալ ծերունիներին՝ ընտանիքներում եւ հիւանդանոցներում կամ հանգստեան տներում պատճառ հանդիսացաւ գրի առնելու այս տողերը, այն յոյսով որ ընթերցողը անաչառ կերպով դատի՝ արդեօք իրաւացի եմ թէ խոտոր եմ գնացել:

Մի գուցէ եթէ մարդկային կեանքի տեւողութեան միջին տարիքը ներկայում 70ի հասած չլինէր (եւ հիմա դեռ աւելին է) եւ մարդը անցեալի պէս 40-50 տարեկանում հեռանար սիրելիներից ու աշխարհից, այս առթիւ ոչինչ չզգրէի: Այդ պայմաններում բոլորս կ'ասէինք «մարդը ապրեց տանջուեց կամ կատարեալ երջանկութեան մէջ, անց կացրեց իր կեանքը եւ առողջ ու ոտքի վրայ ընդունեց Աստուծոյ հրաւերն ու գնաց: Իսկ այսօր գիտութեան եւ առողջապահական շօշափելի առաջընթացը երկարակեցութիւն է պարգեւել մարդուն: Յաւոք զգացմունքային, մարդկային ու հասարակական կապերի եւ հաղորդակցութեան դրսեւորումը իւրաքանչիւր ձեւ է ստացել: Պատասխանատուութեան եւ հոգատարութեան զգացումները գունաթափուած են: Ընտանեկան պարագաների յարաբերական կապերը, միաւորումը աւելի թույլ եւ անտարբերութեան են ենթարկուել, այնքան որ տարեց եւ ծեր մարդը ոչ միայն դառնում է սրտնեղութեան առիթ իր զաւակների, շրջապատի այլեւ անարժէք եւ ծախսաբեր ընտանիքի եւ պետութեան համար: Ուստի իր ոչ պիտանի մնացեալ կեանքի օրերը պէտք է անց կացնի մեծահասակների հանգստավայրում կամ յատուկ հիւանդանոցներում: Մինչ դեռ այդ նոյն ուշք ու միտքը կորցրած անկողնում պառկած կամ անասալակին գամուած անհատը, տարբեր անձնական կազմակերպութիւնների համար եկամուտի աղբիւր է դառնում, որը տրամադրուած ծառայութիւններից անգամ անտեղեակ է, իսկ եթէ ուշք ու միտքը դեռ չի կորցրել եւ քայլելու ու խօսելու ունակութիւն ունի իր կորցրածի փնտրողներին մէջ է: Իր սիրելիների, դեռեւս չմոռացուած անցեալի, իր ձեռքից տուած տունն ու կեանքն է մտովի փնտրում: Այդուհանդերձ որ ամենագեղեցիկ ծերանոցումն է, եթէ ուշադիր լինէք, կը զգաք որ խորին լուռութեան մէջ մրմնջում է՝

Այս շէնքը գեղեցիկ է բայց իմ տունը չի:

Նա իր կորած տունն է փնտրում, ուր եռում էր կեանքը, իր ծանօթ սեղանը, աթոռն ու մահճակալն է ուզում երբ ամենօրեայ աշխատանքից խոնջած, տարիներ նստել եւ պառկել էր, որ հանգստանայ: Այո պայտանման ծերանոցային շէնքը, որ իր գեղեցկութեամբ ու մաքրութեամբ շլացուցիչ է, նրա համար օտար ու անհարազատ է: Միթէ մեզ ողջ ու առողջ մարդկանց համար նոյնը չի մենք եւս ասում ենք:

Այս երկիրը ինչքան գեղեցիկ է բայց իմ հայրենիք չի:

Մի րոպէ մտածէք ի՞նչ նմանութիւն կայ այս երկու ցանկութեան մէջ (գուցէ մէկը գտնուի որ հակառակ մտածի, երանի նրան) լաւ, նիւթից չչեղուենք, մի հայեացքով ինչ լաւ է որ մեր սիրելի տարեցներին մօտ կեանքն ու նրա իմաստը արդէն անարժէք է իրենց համար: Ինչ լաւ է որ շատերը այս դժբախտութեան եւ լքուածութեան գիտակցումից արդէն զրկուած են: Երբեմն մտածում եմ ինչ բարի վախճան է, բայց ինչո՞ւ այս խնդիրը դարձել է մտածումներիս առանցքը եւ ստիպում է ինձ գրել այս տողերը:

Անգամներ ակնատես լինելով այս ինքնամոռացներին, այս լաւ ու վատ ապրածներին, տուն ու կեանք արարողներին, այս մարդկային հասարակութեան պահպաններին, այս կեանք պարգեւող, կորովի ու բարի հայրերն ու մայրերը, այս միջավայրն ու կեանքը, որ մենք վայելում ենք, այս սիրելիները որ մեզ այսօրուայ ինքնահաւաններին, եւ վաղուայ քայքայուածներին կեանք տուին այսօր խղճահարութեան առարկա՞ց են, տան անկիւնում մեն մենակ կամ հիւանդանոցում անօգուտ ֆիզիքական բուժում ստանալով իրենց անհիմն ու անտեղեակ անսփոփանք կեանքն են մաշում: Լսելով լօզունգ դարձած որոշ խօսքեր, որը թունաւորում է փոքրահասակների ուղեղը, եւ յաճախ պայթում է հաւաքոյթներում, ինձ մեծահասակիս որ դեռ ունեմ արթուն միտք եւ առողջ զգացմունքներ խիստ անհանգստացնում է, այդ ինչ արտայայտութիւն է որ մեծահասակների եւ անկարողների ներկայութեամբ եւս լօզունգանման արւում է: Թէ մենք եւ թէ մեր երեխաները մեր կեանքն ունենք: Դա ճիշտ է ամէն ոք իր կեանքն ունի, բայց միթէ այն ծերունակազոր հայրը միթէ քեզ պէս եւ քեզանից աւելի երիտասարդ չի՞ եղել: Այս թուլակազմ ծերուկը որ երեխաներ է ունեցել եւ նեղութիւնով նրանց մեծացրել, նրանցից մէկն էլ դու ես, կեանք չի՞ ունեցել: Դու ո՞վ կարող մարդ դու այն չէ՞իր որ ճանճ ու մոծակից էլ չէիր կարող պաշտպանուել եւ քո ծնողներիդ՝ մօրդ ու հօրդ ջանքերով այսօր ոտքի ես ու հօր: Եւ դու որ կրկնում ես այդ խօսքը միթէ՞ ինքդ քո սիրասուն զաւակիդ համար չես անում եւ նա էլ իր զաւակի համար պէտք է անի: Ուրեմն այս մի սովորական եւ ընդհանուր պարտականութիւն է եւ պարտադրանք: Ամէն ծնուած երեխայի եւ ծնողի մէջ ոչ մի պայմանագիր չի գրուում որ նա ծնողների ծերութեան ժամանակ նրանց պահի ու պահպանի կամ իր վաստակը լիովին նրանց կատկայնի: Ոչ հենց նոյն ֆիզիքական կախուածութիւնն է որը փոխարինում է սիրով, գուրգուրանքով եւ մարդկային ու հոգեկան զգացումներով: Ծերութեան եւ տկարութեան ժամանակ է որ զաւակի ներկայութիւնը ու հոգատարութիւնը ամենամեծ սփոփանքն է այդ գոհաբերող ծնողների: Ծերութիւնը ինչպէս գիտէք բոլորի համար անխուսափելի է, ուրեմն պէտք է մարդկայնօրէն, որդիաբար, առանց չապաւումի օգնութեան ձեռք մեկնել առանց որեւէ լօզունգային մեկնաբանութեան որը նրանց զաւակներին այսինքն մեզ անյարիր է, մեզ որ նրանց գոհողութիւնների եւ զրկանքների շնորհիւ մեծացել եւ հասունացել ենք: Ծիշտ է որ մենք չենք կարող նրանց չափ գոհողութիւնով փոխարինենք, բայց երեխաների որդիական ու մարդկային պարտականութիւնները ի՞նչ եղան, մենք ինչդրի որ կողմն ենք: Եթէ մեր պարտականութիւնները չենք գիտակցում էլ զարտուղի չգնանք, իսկ եթէ գիտակցում ու կատարում ենք գոնէ շտրտնջանք, որովհետեւ նրանք էլ իրենց պարտքը կատարել են առանց սպասելիքի եւ պահանջի: Այդ է պատճառը որ ես լսելիս այդ սովորական դարձած «ամէն մարդ իր կեանքն ունի» մտածում եմ արդեօք նրանք ամէն օր հայելիում տեսնում են իրենց, արդեօք չեն մտածում թէ իրենց ապագան ինչ է լինելու: Ծիշտ է որ հիմա ամէն ինչ դասաւորուած է, մենք մեր կեանքն ունենք, նրանք էլ իրենցը բայց տասը քսան տարի յետոյ ի՞նչ: Այս ծերունի ծնողների նման պէտք է մի անկիւնում ծուարե՞ն: Արդեօք վտիտ ու անկար մարմինները անարժէք են:

Սիրելի երիտասարդ տղաներ եւ աղջիկներ սիրելի միջահասակներ «Մենք մեր կեանքը ունենք» գեղեցիկ նախադասութիւն է, բայց անհիմաստ է, նրա կեանքը, նրա անցեալը որ անցել է երեխաներին խնամելով ապա ի՞նչ: Մեծ հարցականի առջեւ է, որտե՞ղ պէտք է հաշուի առնել: Գուցէ մի ուրիշ անհիմաստ լօզունգով ուզենք պաշտպանուել օրինակ «Մենք մեր ցանկութեամբ չենք ծնուել, թող աշխարհը չբերէին մեզ» այս էլ մի խօսք է, բոլորս այդ մասին անգամներ խորհել ենք: Այս ցանկութիւնը մեր ձեռքն է՞: Կամ մէկ, երկու դար առաջ մարդուն հասանելի է՞ր: Ոչ այդ ապրելու եւ յարատեւելու բնագոյն է որ նախամարդուն մղել է սերունդ ստեղծելով աշխարհը կայուն պահել, որ մենք այսօր ապրենք եւ գոռոզութեամբ ու ինքնահաւանութեամբ ամէն ինչի վրայ չարախնդրանք ու փիլիսոփայենք: Մի կողմ դնենք այս դատարկ մեծամտութիւնը: Ամենայն դէպս մարդկութիւնը աշխարհ է եկել անկախ իր կամքից եւ բարիք ու չարիք է հետը բերել: Եւ այս աշխարհը ու՞մ կամքով կամ ինչով որ ստեղծուել է նախնական մղումը բնագոյն է եղել եւ բոյսերից մինչեւ մեծ ու փոքր շնչաւոր կենդանիները բոլորը ստեղծուել են այս բնագոյնի մղումով, որը մեր սէր եւ կեանք ենք անուանում: Մեր կեանքը մօր արգանդում սաղմաւորուելուց անմիջապէս սկսում է եւ շարունակուում մինչեւ մահ ու զերեզման... Եւ այդ մենք ենք որ ծնելուց յետոյ կեանքի լաւն ու վատը մեզ հետ է եւ պէտք է համակերպուենք եւ ապրենք: Ուրեմն աշխարհ գալը իմաստաւորուում է նրանով որ կեանքը աշխարհի վրայ յարատեւի: (Այդ էլ անհերքելի է որ ներկայ առաջադէմ գիտութիւնը կարելի է դարձրել արհեստականօրէն սերնդագործութեան առաջն առնել, բայց այս բացառութիւն է եւ ընդհանրացած եւ բնութեան օրէնք չի): Ուրեմն օրինական կեանքի ձեւաւորումը այս է որ բնական բնագոյնի եւ Աստուծո կամքով է ընթանում:

Սիրելի երիտասարդ տղաներ եւ աղջիկներ սիրելի միջահասակներ «Մենք մեր կեանքը ունենք» գեղեցիկ նախադասութիւն է, բայց անհիմաստ է, նրա կեանքը, նրա անցեալը որ անցել է երեխաներին խնամելով ապա ի՞նչ: Մեծ հարցականի առջեւ է, որտե՞ղ պէտք է հաշուի առնել: Գուցէ մի ուրիշ անհիմաստ լօզունգով ուզենք պաշտպանուել օրինակ «Մենք մեր ցանկութեամբ չենք ծնուել, թող աշխարհը չբերէին մեզ» այս էլ մի խօսք է, բոլորս այդ մասին անգամներ խորհել ենք: Այս ցանկութիւնը մեր ձեռքն է՞: Կամ մէկ, երկու դար առաջ մարդուն հասանելի է՞ր: Ոչ այդ ապրելու եւ յարատեւելու բնագոյն է որ նախամարդուն մղել է սերունդ ստեղծելով աշխարհը կայուն պահել, որ մենք այսօր ապրենք եւ գոռոզութեամբ ու ինքնահաւանութեամբ ամէն ինչի վրայ չարախնդրանք ու փիլիսոփայենք: Մի կողմ դնենք այս դատարկ մեծամտութիւնը: Ամենայն դէպս մարդկութիւնը աշխարհ է եկել անկախ իր կամքից եւ բարիք ու չարիք է հետը բերել: Եւ այս աշխարհը ու՞մ կամքով կամ ինչով որ ստեղծուել է նախնական մղումը բնագոյն է եղել եւ բոյսերից մինչեւ մեծ ու փոքր շնչաւոր կենդանիները բոլորը ստեղծուել են այս բնագոյնի մղումով, որը մեր սէր եւ կեանք ենք անուանում: Մեր կեանքը մօր արգանդում սաղմաւորուելուց անմիջապէս սկսում է եւ շարունակուում մինչեւ մահ ու զերեզման... Եւ այդ մենք ենք որ ծնելուց յետոյ կեանքի լաւն ու վատը մեզ հետ է եւ պէտք է համակերպուենք եւ ապրենք: Ուրեմն աշխարհ գալը իմաստաւորուում է նրանով որ կեանքը աշխարհի վրայ յարատեւի: (Այդ էլ անհերքելի է որ ներկայ առաջադէմ գիտութիւնը կարելի է դարձրել արհեստականօրէն սերնդագործութեան առաջն առնել, բայց այս բացառութիւն է եւ ընդհանրացած եւ բնութեան օրէնք չի): Ուրեմն օրինական կեանքի ձեւաւորումը այս է որ բնական բնագոյնի եւ Աստուծո կամքով է ընթանում:

Սիրելի եւ սիրուելի մարդ անասուն, բոյս ու բուսականութեան համար կեանքի միակ աղբիւրն է, մեզանից առաջ կային, մենք կանք եւ վաղը նորեկներ են լինելու: Եթէ սէր չլինէր էութիւն չէր լինի:

Այս լոյս աշխարհի եկածները
Շաբ.ք էջ 17

ԲԱՅՈՒԱԾ Է

**Շիպնոսարութեան կեդրոն
ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ
Արթին Սաղրեանի
Փաստփնայի մէջ
Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10 00Է
մինչեւ կ.ե. ժամը 3 00
Շապտ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104
Շեռախօս (818) 434-8118
միայն ժամադրութեամբ**

**«Միտք մարմնի վրայ»
թուլացման (relaxation) միջոցաւ կը
դարմանուի.**

- Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերճնշում, շաքարախտ, ազմա, եւայլն
- Մոլութիւններ - սիկաբթ, ալքոլ, թմրադեղեր, եւայլն
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մեզ, եղունգի կրծում, եւայլն

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԸ

(Յապադումով)

Լուս Անճելուսի Ս. Սարգիս Հայց. Առաք. եկեղեցու առանդական գեղեցիկ սովորութիւններու շարքին է ամէն տարի նշել թարգմանչաց տօնը: Այդ գեղեցիկ նախաձեռնութիւնը դարձեալ տեղի ունեցաւ Կիրակի 14 Հոկտեմբեր, 2007: Օրուան պատարագին էր Արեւմտեան Թեմի առաջնորդական ընդհանուր փոխանորդ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտմեան: Իսկ հոգեպարար Կոմիտասեան քառաձայն պատարագի երգեցողութիւնը կատարուեցաւ Խաչատուրեան դպրաց դաս-երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Բարշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի: Նշենք նաեւ որ նախապէս օրուան պատարագիչ որոշուած էր առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեան, սակայն յարգելի պատճառով մը բացակայելուն զինք կը փոխարինէր Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտմեան:

Իր քարոզին մէջ հայր սուրբը ոգեկոչելով յիշատակը սուրբ թարգմանիչներուն բարձր գնահատեց անոնց բերած նպաստը հայոց ոսկեդար կերտելու մէջ: Առանձնապէս արժեւորեց Աստուածաշունչ մատենի հայերէնի թարգմանութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ «Աստուծոյ խօսքին ներկայութիւնը: Աստուածաշունչի թարգմանութեամբ բացուեցաւ իրաւ եւ յաւիտեան փրկութեան ճամբան»: Այնուհետեւ յորդորեց պահպանել մեր կրօնական եւ ազգային աւանդութիւններն ու չհեռանալ մեր Տիրոջ խօսքէն:

Ս. պատարագին ետք եկեղեցու կից Մամուլեան սրահին մէջ տեղի ունեցաւ «սիրոյ սեղան» ճաշկերոյթ մը, որ կազմակերպուած էր Ս. Սարգիս եկեղեցու տիկնանց միութեան կողմէ:

Սեղանի օրհնութենէն ետք գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը, գործնականօրէն վարեց ծխական խորհուրդի նախկին ատենապետ Բարշ. Յակոբ Սրկ. Մերունեան:

Պոլսահայ Միութեան մեծ ընտանիքին անունով խօսք առաւ միութեան ատենապետ Սիմոն Աճրիլաճօղլու: Ան գնահատեց Ս. Սարգիս եկեղեցու ժրջան հովիւ Տ. Նարեկ Քհնյ. Մատարեանի օգտաշատ ծառայութիւնները: Ապա անդրադարձաւ հայ գրերու գիւտին եւ թարգմանիչ վարդապետներու աշխատանքին: Ան ընդգծեց որ այսպիսով վերջնականապէս հաստատուեցաւ քրիստոնէութեան յաղթանակը եւ հայ ժողովուրդը գիտակից դարձաւ իր ազգային գոյութեան, մշակոյթին եւ հաւատքին:

Ս. Աճրիլաճօղլուն անդրադարձաւ նաեւ Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբին, որուն 29րդ տարեդարձն է այսօր: Ան շնորհակալութեամբ ղեկավար Բարշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանն ու բոլոր անդամները եւ յաջողութիւն մաղթեց իրենց ազգօգուտ առաքելու-

թեան:

Ելոյթ ունեցաւ նաեւ Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբի ղեկավար Ստեփան Սրկ. Կէօզիւմեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիւին եւ ծխական խորհուրդին, այս գեղեցիկ միջոցառումին համար, որ կը գոգադիպի նաեւ երգչախումբի հիմնադրութեան 29րդ տարեդարձին հետ: Ան յայտնեց որ յառաջիկայ տարի երգչախումբը կը նախապատրաստուի արժանավայել շուքով նշելու իր հիմնադրութեան 30ամեակը:

Գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Ս. Սարգիս եկեղեցու «Մանկունք» երգչախումբը երգեց Ս. Թարգմանիչներու նուիրուած «Որք Զարդարեցին», ինչպէս նաեւ «Զայն տոտը ֆիտա», «Զէյթունցիները» եւ «Հայրապետական Մաղթերգ»: Տիկ. Շուշան Վարդանեան արտասանեց Սիրվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»:

Տեղի ունեցաւ նաեւ Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբի 29րդ տարեդարձի կարկանդակի հատման պաշտօնական արարողութիւնը:

Վերջին խօսք առնողն եղաւ Արթ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեան: Ան ըսաւ թէ որպէս եկեղեցու հովիւ ինձմէ աւելի ուրախ մարդ չկայ: Տէր Հայրն իր ուրախութիւնը յայտնեց ի տես Ս. Սարգիս եկեղեցիէն ներս գործող տարբեր կառույցներու աշխուժ գործունէութեան: Առանձնապէս գնահատեց Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբի գոհաբերութիւնը: «Երգչախումբ մը որ կ'երգէ արօթքով»: Ապա խօսելով թարգմանիչներու մասին ըսաւ թէ թարգմանիչները բոլորս ենք, ծնողներ, ուսուցիչներ, լրագրողներ եւ հոգեւորականներ: Այնուհետեւ Տէր Հայրը շնորհակալութիւն յայտնեց Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտմեանին բոլոր անոնց որ կը ծառայեն եկեղեցու պաշտօնութեան ու բարգաւաճման համար:

Ներկաները բուռն ծափահարութեամբ գնահատեցին Տիկնանց Միութեան կատարած 12,000 տոլարի տարեկան նուիրատուութիւնը եկեղեցիին: Տեղի ունեցան նաեւ սրտաբուխ այլ նուիրատուութիւններ, ընդհանուր գումարը հասցնելով շուրջ 20 հազար տոլարի:

Առաջնորդական փոխանորդ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտմեան խօսեցաւ ոչ մարդկային սիրոյ այլ եկեղեցու եւ Աստուծոյ հանդէպ եղած անկեղծ սիրոյ մասին: Ապա գնահատեց Ս. Սարգիս եկեղեցու ժրջան հովիւ Արթ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեանի, Խաչատուրեան երգչախումբի եւ Տիկնանց Մարմնի ու բոլոր կառույցներու գործունէութիւնները, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

Սիրոյ սեղանը վերջ գտաւ «Պահպանիչ» արթթով:

«ԱՅՍ ԸՆԵՐ ՈՐՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ Է, ԲԱՅՑ ԻՄ ՏՈՒՆԸ ԶԻ»

Շարունակուած էջ 16-էն

ոչ ոք իր գալու մէջ միջնորդութիւն չի ունեցել, այլ բնազդն է որ սէր է ընծայուած եւ սէրը՝ դիպուած եւ դիպուածը հիացում եւ հիացումը՝ գրկախառնուել է ստեղծում: Մենք ապրողներս երբեմն մեծամիտ ենք ծնունդ եւ մեծամիտներ ենք ծնունդ եւ դեռ կեանքի բարիքներն էլ անտեսում ենք: Այնուամենայնիւ կեանքի յարատեւումը ստիպողական է եւ անխուսափելի եւ նրա արդիւնքը նախամարդն է ու մենք 21րդ դարի մարդիկ եւ ապագայ գալիքները՝ բոլորը չենթարկուելու անկարող էակներ: Մի խօսքով ստիպուած ենք եւ կամագործել:

Յայտնի չի ինչո՞ւ եկայ եւ ո՞ւր եմ գնալու,

Յաւն այն է որը չգիտեմ ի՞նչ եմ անելու:

Ահա սիրելիներս այս տողերը կարդալով արդեօ՞ք ներելի է մեզ որ զլանալով ամենահամեստ պարտքը եր ծնողներին, բառախաղով մեզ արդարացնենք: Օտգուելով առիթից մեր անտարբերութիւնն ու օտարացումը թաքցնելու համար նրանց արժեգրկենք եւ նրանց որպէս մի անարժան հնութիւն (անթիկ) տնային ցուցափեղկում ներկայացնենք: Չեմ ասում թանկարժէք քարէ կամ պրոնզէ հնութեան պէս ապահով տեղում կամ յանձնենք պանքերին, եկէ՛ք նրանց երկարամեայ սէրն ու գուրգուրանքը աչքի առաջ ունենալով, սրտանց սէր եւ հոգատարութիւն ցուցաբերելով, գնահատենք նրանց անհատականութիւնը, արժեւորենք նրանք գոյութիւնն ու էութիւնը, ոչ թէ հարստութիւնն ու ունեցուածքը եւ մեր երեխաներին եւ թոռներին մեր օրինակով ոչ թէ խօսքով ու խրատով, փոխանցենք բարի վարք եւ երախտագիտութիւն:

Այո, այս ամէն ինչու սկիզբը սէրն է որ անմահ է, բնութեան զարուն է որ աշխարհը կենդանացում է, սէրն է որ բնութեան էակներին առուց ու բուրբ թէ պահում, սէրն է որ կանաչ զարունը բողբոջում, ծաղկում ու պտուղ է տալիս եւ սիրատոյն սիրահարին ստիպակի պէս սրտայոյզ երգերով

ցանկութիւն է արթնացնում բոլորի մէջ որ սիրեցեալ փնտռեն: Այս սիրոյ հրաշքն է գոյութեան գաղտնիքը որ ծաղիկները ծաղկում են թռչունների բոյները լցում են կենսաբաշխ ճուտերով, հասարակ եւ պալատանման տներին նորածինների անուշ ճուտողիւնն է լաւում, որքան երջանկաբեր է ամէն ինչ: Օղն ու ջուրն ու հողը կենաց աւիտիկ են լցում ու փոխանցում շրջապատին: Խնդրում եմ եկէ՛ք մեր սիրելիներին աւելի արժեւորենք, եկէ՛ք մեր գաւազներին սիրել սովորեցնենք, որ նրանք էլ ապագայ սերունդներին սովորեցնեն որ իրատես լինեն ոչ թէ եսակեդրոն էակներ:

Որպէս վերջաբան յիշեցի երիտասարդ հասակումս լսած անմուռանալի իմաստուն խօսք մի սիրելի ծերունուց որը այսպէս պատասխանեց իմ հարցին: Որդիս հարցնում ես թէ մարդկութիւնը քանի տեսակի կարելի է բաժանել, վատերը մի կողմ, երեք տեսակ մարդ կայ աշխարհում: Առաջինները նրանք որ ասում են ամէն ինչ իմն կամ մերն է, երկրորդը նրանք որ բարեմիտ են եւ բարեխիղճ ու ազատամիտ, ասում են ինչ որ կայ կէսը ինձ, կէսը քեզ, իսկ երրորդ խմբակը ասում է ամէնը քեզ, ամէնը ձեզ...:

Լուրթեամբ սպասեցի բացատրութեան, ասաց՝ առաջին խումբը որ պահանջում է բոլորը, մարդու գաւազն է «բոլորը ինձ բոլորը մեզ», երկրորդը մարդու մտերիմ, ազնիւ եւ հաւատարիմ ընկերներն են որ բարեխիղճօրէն ասում են «կէսը քեզ, կէսը մեզ» եւ երրորդ տեսակը անձնագործ ու ինքնամուռաց, նուիրեալ հայրերն ու մայրերն են որ ասում են «բոլորը քեզ, բոլորը ձեզ, ամբողջը քեզ ամբողջը ձեզ»:

Հիմա մենք քաղաքակիրթ ու ազատամիտներս որ հաւատացած ենք որ ամենագէտ ու կայացած հասուն, խելացի մարդիկ ենք այս մեր հին սերունդի պատկանող այս իմաստուն ծերունու այս վերջին խօսքի դիմաց ի՞նչ ունենք ասելու: Այս վեհանձն հայրերն ու մայրեր են, ուրեմն սիրենք նրանց մինչ նրանք կան եւ կանք նաեւ մենք:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax :-----

ՏՐՏՈՒՆԶ...
 (Երկրաշարժից յետոյ)
 ՆԵՐՍԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Վշտացրի ինձ խոր վշտով,
 Երբ քեզ ցնցեց ու աւերեց,
 Երկրաշարժը զագրելի...
 Իմ Հայաստան,
 Իմ սրտի յոյս,
 Դու լոյս հաւատք պաշտելի,
 Դու մեզի մայր,
 Դու ողջ աշխարհ,
 Դու մօրից էլ սիրելի...

Իմ Հայաստան
 Իմ աչքի լոյս,
 Ամենաբանկ, սիրելի,
 Քեզ սիրում եմ
 Ամբողջ սրտով
 Ամէն բանից աւելի...
 Մէկ անգամ դու,
 Լոկ մէկ անգամ

ՄԱՐՁԱԿԱՆ

ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԴՅՈՒԹՊՈԼԻ ԶԱՒԱՔԱԿԱՆԸ ՍՊԱՆԻԱՅԻ, ՈՒԿՐԱՆԻԱՅԻ ԵՒ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԹԻՄԵՐԻ ԶԵՏ ԸՆԴԳՐԿՈՒԵԼ Է ՆՈՅՆ ԵՆԹԱԽՄԲՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի մինչև 19 տարեկանների հաւաքականը Եւրոպայի առաջնութեան ընտրական 2-րդ փուլում կը մրցի Թուրքիայի հաւաքականի հետ: Հայաստանի հաւաքականը յայտնուել է 7-րդ խմբում, որտեղ մեր թիմի մրցակիցները կը լինեն նաեւ Ուկրաինայի եւ Սպանիայի հաւաքականները: Վերջինս Եւրոպայի մինչև 19 տարեկանների գործող ախոյեանն է:

Յիշեցնենք, որ նախորդ Կիրակի կայացած վիճակահանութեան ժամանակ մրցակիցներ էին դարձել նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի ազգային հաւաքականները: Մինչ այս միեւնոյն ընտրական խմբում էին յայտնել Հայաստանի եւ Թուրքիայի երիտասարդական հաւաքականները:

Մինչև 19 տարեկանների Հայաստանի ընտրանին, ընտրական 1-ին փուլում յաջող հանդէս գալով, Լիտուայում կայացած մրցաշարում նուաճել էր յաջորդ փուլի ուղեգիր: Հայաստանը հաւաքականին 2-րդ փուլում անհամեմատ լուրջ մրցակիցներ են սպասուում եւ մասնագէտների կարծիքով՝ 7-րդ խումբը իր կազմով ամենաուժեղն է: Ի դէպ, իւրաքանչիւր խմբից եզրափակիչ փուլում հանդէս գալու իրաւունք կը ստանայ ընդամենը 1-ական հաւաքական, ուստի պայքարը շարունակելու համար Գիւլբուրգեանցի սաներին անհրաժեշտ կը լինի յաղթել այս խմբում:

ՄԻՇԵԼ ՊԼԱՏԻՆԻ. «ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԶԱՒԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԽԱՂԵՐԸ ԿԸ ԿԱՅԱՆԱՆ»

ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշէլ Պլատինին ակնկալում է, որ ֆուտբոլի աշխարհի 2010 թուականի առաջնութեան նախընտրական փուլում Հայաստանի եւ Թուրքիայի հաւաքականների խաղերը կը կայանան՝ չնայած երկու երկրների միջեւ առկայ քաղաքական լուրջ տարաձայնութիւններին:

«Մենք հանդիպել ենք Հայաստանի եւ Թուրքիայի ֆուտբոլի ֆեդերացիաների հետ, եւ չկայ որեւէ խնդիր. նրանք ասել են, որ խաղերը կանցկացուեն նարաւորինս լաւ», - երէկ Բրիւսելում լրագրողներին ասել է Պլատինին:

«Ռոյթերզ» գործակալութեան վկայութեամբ՝ Եւրոպայի 2008 թուականի առաջնութեան նախընտրական մրցաշարում Հայաստանի եւ Ատրպէյջանի թիմերի միջեւ այդպէս էլ չկայացած հանդիպումների առնչութեամբ ՈՒԵՖԱ-ի նախագահը ընդգծել է. - «Մենք խնդիր ունեցանք Հայաստանի եւ Ատրպէյջանի հետ կապուած, քանի որ դա աւելի վատ էր, քան յարաբերութիւնների բացակայութիւնը՝ այդտեղ ծայրայեղ լարուածութեան խնդիր կար, եւ (ՈւեՖԱ-ի) գործադիր կոմիտէն որոշեց չեղեալ յայտարարել երկու խաղերը»:

Ֆուտբոլի աշխարհի 2010 թուականի առաջնութեան նախընտրական մրցաշարի 5-րդ խմբում Հայաստանի հաւաքականի մրցակիցներն են Սպանիայի, Թուրքիայի, Բելգիայի, Բոսնիա եւ Հերցեգովինայի եւ Էստոնիայի թիմերը:

ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ
Փաստինայի մէջ վարձու է յարկաբաժին մը երկրորդ յարկի վրայ: Ունի երկու ննջարան, հիւրանոց, մէկ ու կէս բաղնիք, անձնական պատշգամ, կեդրոնական A/C եւ երկու ինքնաշարժի կանգառ: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ (626) 797-8623:

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ
Փաստինայի մէջ փոքր խանութ մը վարձու է Washington պողոտայի վրայ: Հասցէն է՝ 1527 Washington Blvd, Pasadena: Մանրամասնութիւններու համար հեռաձայնել Աւոյին՝ (626) 794-5318 թիւին:

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ Ոչ Քէ մէկ, ոչ Քէ 2, ոչ Քէ 3 Ժամ այլ Օրուան 24 Ժամերը

Շաբաթը 7 օր անվճար
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Փորթսմութ - Էվըրթըն	0-0	Լիվըրփուլ - Պոլըքըն	4-0
Պլեյպարն - Նիւքեմբըր	3-1	Մանչեսթըր Եուն. - Ֆուլհամ	2-0
Սանտըրլէնտ - Տերաի Քաունթի	1-0	Ռիտինկ - Միտլըզպորո	1-1
Ասթըն Վիլլա - Արսենալ	1-2	Չելսի - Ուէսթ Յամ	1-0
Ուիկան Աթլ. - Մանչեսթըր Ս.	1-1	Թոթեմհամ - Պըրմինգհեմ	2-3

Առաջատար խումբերու դասաւորումը

Արսենալ	15	11	4	0	32-12	37
Մանչեսթըր Եուն.	15	10	3	2	25-7	33
Չելսի	15	9	4	2	22-9	31
Լիվըրփուլ	14	8	6	0	26-6	30
Մանչեսթըր Սիթի	15	9	3	3	19-15	30
Փորթսմութ	15	7	6	2	25-13	27
Ասթըն Վիլլա	15	8	3	4	26-16	27

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտբոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Բերթա Պերլին - Պ. Լիվըրքուզըն	0-3	Ռոսթըր - Զանդլըր-96	0-3
Վոլսպուրկ - Այնթ. Ֆրանքֆորթ	2-2	Քոպփուս - Քարլսրուհէ	2-0
Շթութկարթ - Տորթմունտ	1-2	Վարտըր Պրէյմըն - Զամպուրկ	2-1
Արմ. Պիլըֆէլտ - Պ. Միւնխիս	0-1	Տուիզպուրկ - Նիւրնբըրկ	1-0
Շալքէ-04 - ՎՖԼ Պոխում	1-0		

Առաջատար խումբերու դասաւորումը

Պայերն Միւնխիս	15	10	4	1	31-8	34
Վարտըր Պրէյմըն	15	10	3	2	34-18	33
Զամպուրկ	15	9	3	3	23-12	30
Պ. Լիվըրքուզըն	15	8	3	4	27-11	27
Քարլսրուհէ	15	8	2	5	16-18	26
Շալքէ-04	15	6	7	2	22-14	25
Զանդլըր-96	15	7	3	5	22-20	24

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Սինեա - Լացիո	1-1	Թորինո - Ճենովա	1-1
Փարմա - Էմփոլի	1-0	Աթալանթա - Նապոլի	5-1
Ա. Սէ. Միլան - Եուվենթուս	0-0	Ա. Էս. Ռոմա - Ուտինտէզէ	2-1
Քաթանիա - Փալերմո	3-1	Սամտորիա - Ռեճինա	3-0
Քալիարի - Լիվորնո	0-0	Ֆիորենցինա - Ինթեր Միլան	0-2

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթեր Միլան	13	9	4	0	26-8	31
Ա. Էս. Ռոմա	13	8	4	1	28-17	28
Եուվենթուս	14	7	5	2	29-13	26
Ուտինտէզէ	14	7	4	3	17-15	25
Ֆիորենցինա	14	6	6	2	19-11	24
Աթալանթա	13	5	6	2	21-16	21
Սամտորիա	14	6	2	6	18-17	20

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Տեփ. Քորունա - Օսասունա	1-2	Ալմերիա - Սելիլլա	
Վալենսիա - Աթլէթ. Պիլաո	0-3	Կեթաֆէ - Լեվանթ	2-1
Էսփանիոլ - Պարսելունա	1-1	Ռէալ Պաթիս - Աթլէթ. Մատրիտ	0-2
Զուլթա - Սարակոսա	2-1	Ռէալ Վալադոլիտ - Վիլզարտալ	2-0
Ռէալ Մատրիտ - Ռասիցն	3-1	Մայորքա - Ռէալ Մուրսիա	1-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Ռէալ Մատրիտ	14	10	2	2	33-14	32
Պարսելունա	14	8	4	2	27-11	28
Վիլզարտալ	14	9	1	4	26-21	28
Աթլէթ. Մատրիտ	14	8	3	3	29-17	27
Էսփանիոլ	14	7	5	2	20-15	26
Վալենսիա	14	8	0	6	20-23	24
Ռասիցն	14	6	5	3	12-12	23

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Լը Մանս - Նանսի	2-1	Վալանսիէ - Րընէ	3-0
Լիլ - Մարսել	1-1	Լիոն - Սթրասպուրկ	5-0
Լորիան - Սէնթ Էթիէն	1-1	Փարիզ Սէն ժերմէն - Քան	0-1
Սոչո - Լանս	0-2	Պորսո - Թուլուզ	4-3
Մոնպօ - Նիս	1-1	Մէթց - Օքսէռ	0-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	16	12	1	3	37-14	37
Նանսի	15	9	4	2	23-9	31
Պորսո	16	8	4	4	23-20	28
Լը Մանս	16	8	2	6	23-24	26
Վալանսիէ	16	7	4	5	20-16	25
Նիս	16	6	6	4	17-13	24
Րընէ	16	7	3	6	17-18	24

ԲԱՑՈՒԵՑ ԽՐԻՍՏԱՆ ԶԱՅՐԻԿԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Շաբաթուօրվա 7-Էճ

առաջընթացի ջատագով: Այսօր էլ նրա թողած ժառանգությունը, նրա կեանքի օրինակը խօսում են մեր գաղափարների հոգիների հետ Հայրենի երկրի յիշատակներով, մեր պատմությունն անմոռանալի

դար յոյսերը՝ խաղաղ աշխարհի մէջ տեսնել ազատ Հայրենիքով միասնական, ապահով ու բարօր եւ հոգեւոր լոյսով ու գիտութեամբ պայծառ հայոց կեանքը: Թող Տէրը զօրացնի մեզ բոլորիս մեր առաքելութեան մէջ եւ արգասաւորի մեր ջանքերը ի սէր



դրուագներով, խօսում են առ Աստուած սիրով եւ ապաւինութեամբ եւ շարունակելու են հոգուց հոգի գրոցը սերնդե-սերունդ»: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը կոչ արեց աղօթելու եւ ձգտելու, որպէսզի»... Աստուծոյ օրհնութեամբ մարմնաւորուեն Նրբիմեան Հայրիկի եւ ազգի հոգ-սերը իրենց ուսերին կրած մեր ժողովրդի մեծ գաղափարների ար-

Հայրենիքի եւ համայն հայ կեանքի»: Հանդիսութեան ընթացքում Գէորգեան Հոգեւոր ձեռնարանի սաներն ասմունքեցին ու ընթերցեցին Նրբիմեան Հայրիկի ստեղծագործութիւններից, գեղարուեստական կատարումներով հանդէս եկաւ Գէորգեան Հոգեւոր ձեռնարանի երգչախումբը՝ ղեկավարութեամբ Շոթա Վարդանեանի:

ՅԻՇԵՆՔ ԱՆՑԵԱԼԸ, ԱՊՐԻՆՔ ԱՅՍՕՐԸ

Շաբաթուօրվա 14-Էճ

ազգային ու բարոյական իմաստով, իր նշանակալից խորհրդով եւ իր պերճախօս լուծեամբ:

Մի՞ վախնար ու կասկածիր իր անակնկալներէն, որքան ալ վշտալի ըլլան անոնք: Դուռն ունիս քեզ գօտեպնդող, քեզ դիւցազնաց-

նող եւ մեծ պայքարներու ճամբուն վրայ քեզ փառաւորող ՀԱՅՈՒ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈՊԻՆ:

Նոր Տարին քուկդ է: Դուռն քեզ ազատ զգայ 365 օրերու լուսեղէն ուղեւորութեան ընթացքին եւ հաւատա, որ յոյսերու նոր արեւածագդ իր բոլոր բարոյութիւններովը պիտի ժպտի քեզի:

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ

ԵՓՐԵՄ ՉԱԻՏԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով վարուժան Գրաճեան եւ ընտանիք իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն ողբացեալի բոլոր պարագաներուն, ի մասնաւորի գաղափարներուն Մէրի, Ջաքարիա եւ Ռաֆֆի Չաւտարեաններուն եւ Քէօշկերեան ընտանիքին: Առ այդ \$40 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ՇՈՂԻ ՇԱՍԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA ԵՐԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00 Կլէնտլի 26-րդ կայանից



Wahib

Wahib's MIDDLE EAST RESTAURANT الشاروق مطعم MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA. TEL 626-281-1006 626-587-1048 FAX 626-281-3641

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future

AGBU HYE GEEN

Presents

MIREILLE KALFAYAN'S BOOK
"AS A WOMAN SAW IT"

Collection of Articles

Presenters:

PROF. OSHEEN KESHISHIAN and MS. CECILE KESHISHIAN

SATURDAY, DECEMBER 15, 2007 - 11:00 AM

AGBU ALEX MANOOGIAN CENTER

2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

RSVP: agbuhyegeen@gmail.com or by calling (626) 794-7942

AGBU PASADENA CHAPTER

Presents

New Year's eve gala

Monday, Dec. 31, 2007
Pasadena Center
8:00pm

Dinner catered by "La Fogata"
DJ entertainment by "Heartbeat"

Please RSVP
(626) 794-7942

AGBU Center Pasadena • 2495 E. Mountain St. Pasadena

ADULTS CELEBRATION GYMNASIUM SEATING DONATION \$100	TEEN'S CELEBRATION IN "BOYAJIAN HALL" DONATION \$65	KIDS 12 & UNDER CELEBRATION IN "BIG TENT" DONATION \$30
--	--	--